Այդ վայրում որեւէ արժեքավոր ժառանգություն չկա, այդ մասին փաստել են տարբեր հնագետներ: Դրանք այն կառույցները չեն, որոնք կարող են դառնալ թանգարանային մեծ համալիր: Եթե ցանկանում են արժեքավոր հայկական հետք գտնել, ապա Երեւանի տարածքում շատ ավելի հին եւ արժեքավոր հնավայրեր կան, որոնք կարելի է վերականգնել:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանը Հայաստանը վերածել է մի երկրի, որն ամեն մեկին տեսնելիս ասում է՝ իսկ դուք մեզ կօգնե՞ք, դուք մեզ ինչո՞վ կօգնեք, մեզ փող կտա՞ք, մեզ պարտք կտա՞ք: Երկարում է ձեռքը եւ դողացող ձայնով կրկնում՝ տուր միլիոն, տուր միլիոն, տուր միլիոն: Ահա թե ինչպիսի անկախ ու ինքնիշխան երկիր է դարձրել նա Հայաստանը:

Կարդացեք՝ էջ 5

Ավինյանը միակ «դժբախտը» չէ ՔՊ-ից, որը, կարծում եմ՝ հրաժեշտ կտա պաշտոնին: Փաշինյանը հենց այդ մասին էր խոսում, երբ ասում էր, որ 21-րդ դարում Հայաստանում չկա մեկը, որի մասին ինքն ամեն ինչ չիմանա: Փաշինյանը ՔՊ-ից որի վրա մատը դնի, իսկույն կթռնի պաշտոնից, կհայտնվի հետապնդումների անվերջանալի շղթայում:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 115 (4250), 11 հուլիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Ար տեղեկություններով, պետական գերատեսչությունների աշխատողներին, հատկապես Երեւանի քաղաքապետարանի եւ թաղապետարանների աշխատակիցներին հորդորել են կիրակի՝ հուլիսի 12-ին, բոլորը՝ մեկ մարդու պես, ներկա գտնվել Հանրապետության հրապարակում, որտեղ իշխանությունը որոշել է նշել Վարդավառի տոնը: Տիգրան Ավինյանը խիստ հրահանգ է իջեցրել՝ սպառնալով, որ ներկա-բացակա են անելու, եւ բացակաները պատժվելու են: Նպատակն այն է, որ հնարավորինս մարդաշատ, ուրախ ու զվարթ տեսարաններ բեմադրվեն՝ ցույց տալու, որ Հայաստանում կյանքն ուրախ է, մարդիկ երջանիկ են եւ իշխանությունից դժգոհություններ չունեն: Ակնհայտ է, որ վերջին շրջանում Նիկոլ Փաշինյանն առաջնորդվում է «հաց եւ տեսարաններ» գաղափարով, ինչքան հնարավոր է՝ շատ տոներ կազմակերպել, մարդկանց ուշադրությունը պայքարից ու կենցաղային դժգոհություններից շեղելու համար: Հիշեցնենք, որ Վարդավառի միջոցառումների համար Ավինյանը հատկացրել է 199 մլն 500 հազար դրամ, այդ օրը հրապարակում նաեւ համերգ է լինելու: Երգելու են Իվետա Մուկուչյանը, Արսեն Գրիգորյանը, Արամ MP3-ն: Միջոցառումը վարելու է ՔՊ-ական Էդուարդ Աղաջանյանի կինը՝ Դիանա Մալենկոն:

Ար տեղեկություններով, Փաշինյանը մտադիր է Գագիկ Ծառուկյանին պատկանող «Արարատցեմենտ» գործարանի ժամանակավոր կառավարիչ նշանակել էկոնոմիկայի փոխնախարար Էդգար Զաքարյանին, որն ի պաշտոնե համակարգում է ոլորտը եւ նախօրեին գործարանի առջեւ բողոքի ցույց անող աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ իր հավատարմությունն էր հայտնել Փաշինյանին. «Նիկոլ Փաշինյանն իմ առաջնորդն է, ինչ ասում է, ճիշտ է ասում»: Փաշինյանը կառավարության նիստից հետո՝ ճեպազրույցում դիմել էր «Արարատցեմենտի» աշխատակիցներին եւ հորդորել՝ չանել գործողություններ, որպեսզի հետո չազատվեն աշխատանքից, ըստ էության սպառնալով՝ բողոքելու դեպքում նրանց աշխատանքից ազատել: Նաեւ ասել էր, որ «Արարատցեմենտը» շուտով լինելու է պետական: Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանին պատկանող ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը մոտ 6 միլիոն դրամ աշխատավարձ է ստանում, փոխնախարար Զաքարյանը, հավանաբար, նման ախորժակ ունի, դրա համար էլ անթաքույց քծնում է Փաշինյանին:

Ստերի ու սխալների արանքում

Յուրաքանչյուր մարդ պետք է կարողանա ընդունել իր սխալները, ձախողումներն ու պարտությունը: Դա օգնում է սխալները շտկելուն, ձախողումը խոստովանելուն, պարտությունը գիտակցելուն ու քայլեր ձեռնարկելուն: Երբ մարդը չի տեսնում իր սխալները, չի ընդունում պարտությունը, համառորեն հերքում է ձախողումների փաստը, ստացվում է այն, ինչ ունենք մենք Հայաստանում: Իսկ ստացվել է այնպես, որ 2018-ին իր պաշտոնավարումը ստանձնելու պահից Նիկոլ Փաշինյանը սկսեց սխալներ անել: Սկզբում այդ սխալները մեծ չէին եւ շտկելի էին, բայց քանի որ նա ունակ չէ տեսնել, գիտակցել ու ուղղել իր սխալները, դրանք գնալով մեծացան, ահագնացան ու իսկական արհավիրքի վերածվեցին: Հետո արդեն նա սկսեց ժխտել իր պարտությունն ու ձախողումները վարչապետի աթոռին: Հանրությանը սկսեց համոզել, որ պարտությունը հաղթանակ է, ձախողումները հաջողություն են: Որ զոհերի գնով ինքնիշխանություն է ինքը կերտել, եւ անգամ բերանից թռցրեց, թե գիտակցված գնացինք զոհողության, որ մեր երկիրն անկախանա, ու ստացվեց, որ պատերազմն իր կողմից հրահրված լինելու փաստն ակամայից խոստովանեց: Հետո հայտարարեց, որ կորուստները կորուստներ չեն, որովհետեւ մենք «կորցրել ենք Արցախը, բայց գտել ենք Հայաստանը»: Ապա փորձեց կորսված Արցախն ու Հայաստանի տարածքից հանձնված կտորները ներկայացնել որպես անխուսափելի օրինաչափություն: Հետո սկսեց խճճվել իր ասած անհեթեթություններին ու ստերի մեջ: Մեկ՝ հանձնում ենք, որ պատերազմ չլինի՝ խաղաղություն լինի, մեկ՝ հանձնում ենք, որ մեզ պատկանող հողերը հետ ստանանք, մեկ՝ հանձնում ենք, որ Ռուսաստանից ու ՀԱՊԿ-ից կախվածությունը չեզոքացնենք: Մեկ հանձնում ենք, որ աշխարհաքաղաքական խաչմերուկ դառնանք, ու մեր տարածքով Արեւմուտքն Արեւելքի հետ կապվի, մենք էլ լավ ապրենք:

Ծաղիկ աճեցնող ջերմոցատերերից մեկը մեզ պատմեց, որ իշխանական օղակներից սպառնալիքներ են ստացել: Իրենց ասվել է՝ եթե դժգոհեք, հրապարակավ ելույթներ ունենաք, հարցազրույցներ տաք եւ պատմեք, որ եվրոպական շուկան չի փոխարինում ռուսական շուկային, ծաղիկ վաճառելը մեծ գլխացավանք է դարձել, ապա եվրոպական շուկայի դռները ձեզ համար՝ որպես պատիժ, ընդմիշտ կփակվեն: Սա է նաեւ պատճառը, որ որոշ ջերմոցատերեր ստում են՝ ասելով, թե կարողացել են ծաղիկն արտահանել Եվրոպա, ամեն ինչ լավ է: Նման բան ասողները, սակայն, չեն նշում, թե խոսքն ինչ քանակի ծաղկի մասին է, քանի որ իրականում որեւէ խոշոր արտահանում դեռ տեղի չի ունեցել՝ ընդամենը փորձանմուշներ են ուղարկվել մի քանի երկիր: Մեր զրուցակիցը նաեւ ասաց, որ տեւական ժամանակ հույսով սպասել են, որ ծաղիկն արտահանելու են ԵՄ շուկա, սակայն արդեն իրենց համբերության բաժակը լցվել է, եւ լռել չեն պատրաստվում, քանի որ հասկացել են՝ իրենց խաբում են:

ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՎԱԽԸ ԲՈՆԵԼ ԵՆ

Բոլորը բացատրություններ են փնտրում, թե ինչու Սահմանադրական դատարանը նման անօրինական որոշում կայացրեց՝ հունիսի 7-ի ընտրությունների հետ կապված, եւ տարբեր վարկածներ են հնչում: Բայց կան նաեւ փաստեր, որոնք վկայում են ՍԴ դատավորների կաշկանդվածության մասին: Յուրաքանչյուրի նկատմամբ իշխանությունը մի թեմա ունի, որի միջոցով արդյունքի է հասել: Օրինակ, ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանի որդու՝ Արեգ Վաղարշյանի նկատմամբ կա հարուցված քրեական գործ, որը հիմա սառեցված է, բայց ցանկացած պահի կարող է վերաբացվել՝ կապված դատավորի պահվածքի հետ: Արեգ Վաղարշյանը մեղադրվում էր 2023 թվականին ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդուն՝ Էդուարդ Նադարյանին դանակահարելու համար: Նրան ժամանակին մեղադրանք է առաջադրվել, կալանավորման միջնորդություն են տարել դատարան, որը մերժվել է: Մեր տեղեկություններով՝ շուրջ 3 տարի տեւող նախաքննությունը դեռ չի ավարտվել, սակայն այս ընթացքում մեղադրանքը հանել են Վաղարշյանի որդու եւ մյուս մեղադրյալների վրայից, եւ դանակահարության գործը մնացել է առանց մեղադրյալի ու լռվել քննչականի դարակներում: Մեկնաբանություն ստանալու համար դիմեցինք Քննչական կոմիտե, մեզ ասացին՝ գրավոր հարցում ուղարկեք:

ՓՈՐՁԵԼ ԵՆՔ ԱՐՏԱՀԱՆԵԼ ՈՒԿՐԱԻՆԱ, ՀՈԼԱՆԴԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ՝ ՈՉ ՄԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՉԻ ՍՏԱՑՎԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցը «Ռոզ Ֆիլդ» վարդերի ջերմոցային տնտեսության ղեկավար **Համբարձում Վարդանյանն** է:*

- Տեւական ժամանակ է՝ ծաղիկներ արտադրող ջերմոցները, ծաղիկ աճեցնողները ծաղիկը Ռուսաստան արտահանել չեն կարողանում, իշխանությունները պնդում են, որ գտել են Ռուսաստանի այլընտրանքը, ծաղիկները, ինչպես նաեւ միրգ-բանջարեղենը, արտահանում են Եվրոպա: Ինչպե՞ս է հարցը լուծվել, ինչպե՞ս եք հոգում ջերմոցի ծախսերը:

- Օգուտ չունենք, ծաղիկը չենք կարողանում Հայաստանից դուրս հանել, ստիպված՝ վաճառում ենք ինքնարժեքից երեք անգամ ցածր գնով: Ուրիշ ոչ մի բան չենք կարողանում անել: Ինչ վերաբերում է Եվրոպա արտահանելուն, ապա մենք մեր ծաղիկները չենք կարողանում Եվրոպա տանել, չենք գտնում գեթ մեկ անձ կամ ընկերություն, որը մեր ծաղիկները եվրոպական շուկայում կգնի: Տարբեր պատճառներով տարբեր երկրներ մերժում են: Կամ գնի հետ կապված են մերժում, կամ մաքսային հարցեր են առաջանում: Մի խոսքով, ծաղիկները Եվրոպա չենք կարող արտահանել, շատ վատ վիճակում ենք հայտնվել:

- Օրինակ՝ ո՞ր եվրոպական երկիր եք փորձել արտահանել:

- Տարբեր՝ Ուկրաինա, Հոլանդիա, Լեհաստան եւ այլն, ոչ մի ուղղությամբ չի ստացվում:

- Ի՞նչ պատճառաբանություն են տալիս, երբ մերժում են:

- Ոչ մի պատճառաբանություն էլ չեն տալիս: Նախ, ասեմ Ձեզ, որ ճանապարհը շատ երկար է, ինքնարժեքով չենք կարող մեծ քանակի ծաղիկ ուղարկել: Փոքր խմբաքանակով էլ անհնար է պրոցեսը կազմակերպել, որովհետեւ ինքնաթիռային փոխադրում չի գործում փոքր քանակի համար, իսկ ավտոմեքենայով անհնար է, ճանապարհը սարսափելի երկար է, իսկ ծաղիկը չի դիմանում, արդյունքում որակի հետ կապված խնդիրներ են առաջանում:

- Իսկ հիմա ի՞նչ արժեքով եք մեկ վարդը տեղական շուկայում վաճառում եւ առաջ ինչքանո՞վ էիք վաճառում:

- Առաջ՝ 150, 200, 250 դրամով՝ մեկ հատը, իսկ հիմա վաճառում ենք 70 եւ 50 դրամով, նայած որը:

- Ինչպե՞ս եք կարողանում ջերմոցի ծախսերը հոգալ:

- Ինքնարժեքից եռակի անգամ էժան գնով ծաղիկ ենք վաճառում, վարկեր ունենք, ծախսեր ունենք, աշխատողներ ունեմ՝ 100-ից ավելի, նախորդ ամիս մի կերպ եմ աշխատավարձ տվել ու մնացած հարցերը լուծել, այս ամիս չգիտեմ ոնց եմ անելու: Գումարներ եմ հայթայթել՝ էստեղից-էնտեղից, որ կարողանամ վճարումներ անել, աշխատակիցներին աշխատավարձ տալ եւ այլն:

- Եթե այսպես շարունակվի, ինչպե՞ս եք Ձեր հետագա աշխատանքը պատկերացնում:

- Չեմ պատկերացնում մեր հետագա աշխատանքը, դա հնարավոր բան չէ: Ձմռան ամիսների ծախսերը մի քանի անգամ ավելի են, չեմ կարող ջերմոցը պահել, եթե այսպես շարունակվեց: Ջերմոցներում եթե ամռան ամիսներին գազի վարձը կազմում է 10-15 միլիոն դրամ՝ մեկ ամսվա համար, ապա ձմռան ամիսներին այն հասնում է 40 միլիոնի: Բացառվում է, որ այս պայմաններում 40 միլիոն գազի վարձ կարողանամ տալ:

- Այսինքն՝ իշխանությունները ստում են, իրականում ծաղկի ջերմոց ունեցող մարդկանց վիճակը ծայրահեղ ծանր է, եւ ոչ մի եվրոպական շուկա էլ չի գնում հայկական ծաղիկը:

- Մակերեսային բաներ են խոսում, ասում են՝ ծաղիկն ուղարկեցինք Եվրոպա, բայց դա չի նշանակում, որ եթե ուղարկում են, ծաղիկը գնաց, հասավ, վաճառվեց: Փորձնական ուղարկում են, որպեսզի հետագայում, եթե ցանկանան, գնեն, բայց այդտեղ հազար ու մի հարց է առաջանում, որակի հետ կապված խնդիրներ եւ այլն: Սահմանն անցնելը չի նշանակում վաճառել ծաղիկը: Ի դեպ, փոքր խմբաքանակով ծաղիկ են այս ընթացքում տարել Եվրոպա, որը չնչին տոկոս է կազմում ընդհանուր հայկական ծաղկի շուկայում:

- Իսկ ներսում կարողանո՞ւմ եք աճեցրած ծաղիկներն ամբողջապես վաճառել:

- Ոչ, անհնար է այդպես: Չի սպառվում, ստիպված՝ արհեստականորեն քչացնում ենք քանակը, որ չթափենք ծաղիկը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵՆՔ ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԱՌԱՆՑ ՆԱՐԿՈԶ ՏԱԼՈՒ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆՔ



«Գիշատիչների հետ իմ աշխատանքային փորձի ընթացքում երեւի մեկ-երկու դեպք է եղել, որ քնեցրած վիճակում ենք տեղափոխել»,- «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Գագիկ Ծառուկյանի սպիտակ առյուծի քնեցմանն ու դրա հետեւանքով կենդանու անկմանը՝ ասաց Երեւանի կենդանաբանական այգու նախկին անասնաբույժ **Անուշ Ռաֆայելյանը**:

«Ցանկացած նարկոզ ցանկացած օրգանիզմի համար՝ լինի մարդ, թե կենդանի, ռիսկային է: Ավելորդ անգամ կենդանուն նարկոզ տալու անհրաժեշտություն չեմ տեսնում: Մենք շատ լավ տեղափոխում էինք, մինչեւ Ռուբեն Խաչատրյանի՝ կենդանաբանական այգի գալը, որովհետեւ մենք ունեինք շատ հմուտ աշխատակիցներ: Վանդակից վանդակ մտնում էր կենդանին, սիրուն տանում էին, այնտեղից բացում էինք, անցնում էր»,- ասաց անասնաբույժը: Նա հիշեցրեց, որ երբ տարիներ առաջ արջը փախել էր, Լենինգրադյան փողոցում հենց կենդանաբանական այգու այն ժամանակվա աշխատակիցներն են գնացել, արջին բռնել ու առանց քնեցնելու՝ մտցրել վանդակը:

«Երբ Ռուբեն Խաչատրյանը եկավ կենդանաբանական այգի, ու Եվրոպայից գալիս էին, իրենք ապշում էին մեր կարողություններ-ի վրա՝ ոնց ենք մենք աշխատում: Ծառուկյանի մոտից մեզ մոտ սպիտակ վագր էր տեղափոխվել՝ վնասվածքով, կռիվ էր եղել, հետեւի պոչը լավ վնասվել էր, ու երեք ամիս, ամեն օր մենք նրա վնասվածքը մշակել ենք: Եվ երբ հոլանդացիները եկել էին ու ուսումնասիրում էին վագրի սկզբնական պատկերը, ասեցին՝ այս ո՞նց եք արել, ասեցի՝ մշակել ենք երեք ամիս, ապշած նայեցին ու հարցրին՝ ո՞նց եք երեք ամիս, ամեն օր քնացրել, ու ինքը ողջ է մնացել: Ասեցի՝ ոչ մի օր չենք քնացրել: Մեր աշխատառը կարող է ժամանակակից չէր, բայց այն շատ ավելի լավն էր ու կենդանիների համար անվնաս էր, ռիսկային չէր: Մենք երբեք չենք քնացրել: Կենդանիների հետ վարվելու, տարբեր իրավիճակներում տարբեր մոտեցումներ ցուցաբերելու հնարավորություն, ձեւ կա: Քնացնել, շոու սարքել՝ լավ չի, էլի»,- շեշտեց Ռաֆայելյանը:

Հարցին, թե արդյոք առյուծի անկումը վրեժխնդրությո՞ւն էր Ծառուկյանից՝ նրան ցավեցնելու համար, ասաց. «Գիտեք, իրենց ճանաչելով՝ չեմ բացառում, որ տգիտության արդյունք է: Կենդանաբանական այգու աշխատողների աշխատառը: Սա առաջին դեպքը չէ, կենդանաբանական այգին, բնականաբար, այդ մասին չի խոսում, բազմիցս նման խնդիրներ են եղել: Տեղափոխման ընթացքում կորուստներ իրենք շատ մեծ քանակով են տալիս, իրենք չեն ուզում բարձրաձայնել, բայց սա կարո՞ղ է եզակի դեպք էր»: Մեր դիտարկմանը, որ տեսանյութում երեւում է, թե այգու աշխատակիցներն ինչպես են առյուծի ամեն թաթը բռնել, ու ամեն մեկը մի կողմ քաշելով փորձում է տեղափոխել, դա ընդունվա՞ծ ձեւ է՝ առյուծ տեղափոխելիս, ասաց, որ առյուծները բավականին ծանր կենդանիներ են: «Սովորաբար նորմալ երկրներում շարժական կռանիկներ են ունենում՝ էլեկտրական, որ հագցնում են, բարձրացնում են, ֆռացնում են, պառկացնում են, բայց առյուծի դիրքը բացարձակապես տեղափոխմանը համապատասխան դիրք չէր: Նարկոզի, դեղի ֆոնին կենդանին ունենում է սրտի աշխատանքի դանդաղում, արյան շրջանառության դանդաղում, թոքերի դիաֆրագմայի աշխատանքի դանդաղում, նարկոզի ժամանակ որ վիրահատում ես, ինքը պառկած է՝ սկսում է շնչառության թուլացումը, շուռ ես տալիս՝ կենդանին հետ է գալիս: Դիրք գոյություն ունի, իր շնչուղիները պիտի մաքսիմալ ազատ լինեն, ինքը չի կարող լեզուն շարժել, չի կարող թուքը կուլ տալ, չի կարող ոչինչ անել: Կենդանին մաքսիմալ պետք է ուղղահայաց փորի վրա պառկած լինի, որովհետեւ իր դիաֆրագման էլ է կողքի վրա աշխատում, մենք ուղիղ ենք շնչում, իրենք կողքից են շնչում: Տեղից չի շնչում, ու դու իր քաշը գցել ես կողքի վրա: Այսինքն այն, ինչ տեսանք տեսանյութում, կատարյալ անփութություն էր այդ քնած առյուծի նկատմամբ, ու այդ հանգամանքները կարող էին պատճառ դառնալ, որ կենդանին չզարթներ»,- շեշտեց կենդանաբանական այգու նախկին անասնաբույժը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Քանաքեռցի Տույի գործը հասավ ավարտին

5 տարի առաջ, Երեւանում աղմկոտ սպանություն տեղի ունեցավ՝ միմյանց վրա կրակել էին մի խումբ քրեական հեղինակություններ, սպանվել էր հայտնի Քանաքեռցի Տույը՝ Արթուր Ղազարյանը, փոխհրաձգությանը մասնակցել էին Տույի մտերիմներն ու ընտանիքի անդամները: Ներկա էր եղել նաեւ ԱԺ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանը: Դեպքը տեղի էր ունեցել Սիմոնյանների տանը: Քրեական գործ հարուցվեց, մարդիկ կալանավորվեցին, 2022-ին գործը հասավ դատարան: Հիշեցնենք, որ Սիմոնյան եղբայրներից Վլադիմիրը Երեւանի քաղաքապետարանի կենդանաբանական այգու փոխտնօրենն է եղել, ապա՝ տնօրենի ԺՊ-ն եւ Հայկ Մարությանի կողմից ազատվել է պաշտոնից, քանի որ փաստաթղթերով չէր համապատասխանում տնօրենին ներկայացվող պահանջներին:

Գործով 5 մեղադրյալ է անցնում՝ Արտուշ, Վլադիմիր, Հովհաննես, Հակոբ Սիմոնյանները եւ նրանց մտերիմ Արսեն Ալեքսանյանը: Բոլորը կալանքի տակ են, բացառությամբ Հակոբ Սիմոնյանի: 4 տարի է՝ այս գործը քննվում է դատարանում: Մեղադրյալներին պարբերաբար բաց են թողում, ապա վերադաս ատյանները կրկին կալանավորում են: Միջադեպի ժամանակ 4 անձ է սպանվել, երեքը՝ Տույի կողմից. ինքը՝ Արթուր Ղազարյանը, նրա մտերիմներ Արայիկ Խաչատրյանը, Արթուր Բորյանը, իսկ մյուս կողմից՝ Սիմոնյանների հայրը՝ Արտուշ Սիմոնյանը: Վերջինս թեպետ ֆիզիկապես չկա, սակայն դատարանում մեղադրյալի կարգավիճակ ունի: Սիմոնյանի իրավահաջորդները չեն ցանկացել, որ մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի, տղաներն ուզում են հասնել հոր արդարացման դատավճռին, ուստի նրան հետմահու մեղադրյալի կարգավիճակ են տվել, եւ գործը քննվում է նաեւ նրա վերաբերյալ:

4 տարվա դատաքննությունից հետո դատավոր Մանվել Շահվերդյանը հեռացել է վերդիկտ կայացնելու: Սիմոնյան եղբայրների պաշտպան Մարգար Պողոսյանը «Հրապարակ»-ի հետ զրույցում կանխատեսեց. «Մոտենում ենք դատաքննության ավարտին, անցել ենք ճառերի փուլը, հիմա վերդիկտի փուլն է: Իմ կարծիքով՝ արդարացնող վերդիկտ կլինի»: Ինչո՞վ էր պայմանավորված 4 տարի դատաքննություն անելը, փաստաբանը պատասխանեց. «Գործի բարդությունով է պայմանավորված, այսպիսի գործ չեք գտնի հանրապետությունով՝ իր բարդությամբ: Դատավարական խնդիրները եւ ապացույցները, որոնք օբյեկտիվ իրականությունում պետք է հայտնաբերվեին եւ ներկայացվեին, մի խոսքով՝ ամեն ինչը»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԱՆԿԼԱՎ

ՇՈՒՏՈՎ ԱՍԵԼՈՒ Է՝ ԵԹԵ ՉՏԱՆՔ ԱՅԴ ԱՆԿԼԱՎՆԵՐԸ, ՊԱՏԵՐԱԶՄ ԿԼԻՆԻ

Վերջին ընտրություններից հետո՝ նախօրեին, Նիկոլ Փաշինյանը, առաջին անգամ խոսելով անկլավների եւ էքսկլավների մասին, լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարեց, որ Հայաստանն ու Ադրբեջանը պետք է լուծեն այդ հարցը, եւ առաջին անգամ անկլավների թեման կապեց Հայաստանի օկուպացված տարածքների հետ. «Ես չեմ կարող հայտարարել, որ մենք անկլավների, էքսկլավների թեմայից հրաժարվում ենք կամ կարող ենք հրաժարվել: Ոչ, մենք պետք է գնանք եւ այդ հարցին լուծում տանք: Ինչպիսին կլինեն լուծումները, դա արդեն քննարկման հարց է»: Հարցը կա, սակայն որեւէ որոշում կամ պայմանավորվածություն դեռ չկա՝ մանրամասնեց նա եւ շեշտեց, որ այդ հարցերը կկարգավորվեն սահմանազատման ընթացքում: Իրավիճակը, նրա խոսքով, հայելային է. կա Արծվաշենը, կան նաեւ ադրբեջանական անկլավները: Ասաց՝ ինչ լուծում կտրվի Արծվաշենին, նույն սկզբունքով կլուծվեն նաեւ մյուսների հարցերը:

Փաշինյանն ասաց, որ Արծվաշեն գյուղը հայկական էքսկլավ է՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո, մինչդեռ այն ՀՀ ինքնիշխան տարածք է՝ համաձայն 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրով ամրագրված սկզբունքների, անտեսելով, որ Արծվաշենն ու մյուս անկլավները ռազմավարական նույն նշանակությունը չունեն, եւ որեւէ մեկը չի գնալու ու չի բնակվելու Արծվաշենում, եթե այն վերադարձվի մեզ: «Եթե մենք գնում ենք այն կանխավարկածով, որ ով ինչ տիրապետում է, ուրեմն դա իրանն է, դա նշանակում է՝ Ջերմուկի տարածքների, մնացած մեր օկուպացված տարածքների հարցը մենք օրակարգից հանում ենք: Մենք պետք է գնանք դե յուրե ճանապարհով, այն քարտեզներով, որ դրված են սեղանին, եւ որով մենք արդեն սահմանազատում իրականացրել ենք Տավուշի մարզի հատվածում»,- ասաց Փաշինյանը՝ պատասխանելով հարցին, թե կարծում եք, որ Տիգրանաշենի հարցը հիմա պետք է քննարկման առարկա դառնա, եւ մեր քարտեզից դուրս դրվի, ինչպես Արծվաշենը Ադրբեջանի քարտեզում է կարմիր, եւ արդյոք փոխանակման հարց կա դրված սեղանին:

2024-ին տավուշյան չորս գյուղերի վերադարձից հետո, սակայն, սահմանագծումը կանգ է առել: 2 տարում կողմերը միայն պայմանավորվել են գործընթացը շարունակել հյուսիսից հարավ, այսինքն՝ սկսել Հայաստան-Ադրբեջան-Վրաստան սահմանի տավուշյան հատվածից, ավարտել Սյունիքում: Թե երբ հերթը կհասնի Ադրբեջանի՝ մեզնից գրաված հայկական հողերին, ինչպես նաեւ՝ անկլավներին, չեն ասել: Կողմերը նաեւ չեն հստակեցնում, թե անկլավների դեպքում ինչ լուծում են պատկերացնում:

«Երբ որ կլինեն տարբերակներ, մենք ժողովրդի առաջ հանդես կգանք: Ես ընդամենը ասում եմ, որ մենք պետք է արձանագրենք, որ այդ հարցը կա, իրավիճակը հայելային է: Ինչ լուծում Արծվաշենի դեպքում կլինի, նույն լուծումներն էլ կլինեն մյուսների դեպքում: Որովհետեւ, եթե մենք ասենք՝ գիտեք ինչ՝ չէ, այդ քարտեզում կա, բայց դա մեզ չի հետաքրքրում, մենք դրանով Ադրբեջանին հնարավորություն կտանք ասելու, որ, հա, Ջերմուկի տարածքը քարտեզում կա, բայց դա մեզ չի հետաքրքրում, որովհետեւ մեր կոնտրոլի տակ է»,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Անկլավների մասին Փաշինյանը դեռ 5 տարի առաջ՝ 2021-ին էր ասել, որ Ադրբեջանն այդ հարցը բարձրացնում է, սակայն կասկածի տակ էր դրել դրանց իրավական հիմքերը: Հիմա ոչ միայն «ճանաչում» է այդ հիմքերը, այլեւ անկլավների հարցը կապում է այն տարածքների հետ, որոնք օկուպացված են՝ Ջերմուկի երկօրյա պատերազմի հետեւանքով, դրանից առաջ՝ 2021 թ. մայիսին, առանց որեւէ կրակոցի զբաղեցրած տարածքների: Փաշինյանի այս հայտարարությունից հետո քաղաքագետներից ոմանք բարձրաձայնեցին, որ նա երկրորդում է ՀԱՊԿ-ի դիրքորոշումը, որը եւս արձագանքում էր, թե սահմանազատման ու սահմանագծման բացակայությունը հստակություն չի ստեղծում սահմանային վեճերի շուրջ: Հիմա Նիկոլ Փաշինյանն ինքն է ասում, որ սահմանային վեճերը պետք է լուծել փոխանակումով: Նույն օրը նաեւ Ադրբեջանի արտգործնախարարն է անդրադարձել անկլավներին: «Դելիմիտացիայի հարցով հանձնաժողովներն աշխատում են, արդեն ունեցել ենք դրական արդյունքներ: Իհարկե, այս գործընթացի շրջանակում կքննարկվեն եւ կլուծվեն նաեւ էքսկլավային գյուղերին վերաբերող հարցերը»,- ասել է Ջեյհուն Բայրամովը՝ ընդգծելով, որ սահմանազատումը կշարունակվի հյուսիսից հարավ ուղղությամբ:

Չորսը մեկի դիմաց հարաբերակցությամբ ադրբեջանական եւ հայկական անկլավները, ըստ տարբեր հաշվարկների, գրեթե նույն չափի տարածք ունեն: Արծվաշենը մոտավորապես 40 քառակուսի կիլոմետր է, ադրբեջանական անկլավները միասին՝ շուրջ 44 ք/կմ, սակայն խիստ տարբեր է դրանց նշանակությունը: Այսպես կոչված, ադրբեջանական անկլավները՝ տավուշյան 3 գյուղերն ու Տիգրանաշենը, Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեն:

Քաղաքագետ **Սուրեն Զոլյանի** կարծիքով՝ Փաշինյանն անկլավ-էքսկլավների հարցը կապում է ՀՀ սուվերեն տարածքների հետ, որպեսզի հող նախապատրաստի ադրբեջանական անկլավները վերադարձնելու համար եւ արդարանա՝ եթե չվերադարձնենք, օկուպացված տարածքները հետ պահանջել չենք կարող: Փաշինյանը, ըստ էության, ուղիղ խոստովանում է, որ տալու է Տիգրանաշենն ու տավուշյան 3 գյուղերը, մի բան, որ, Զոլյանի խոսքով՝ նախկինում ուղիղ չէր խոստովանում՝ ասելով միայն, թե չի կարող Արծվաշենը չվերադարձնել, ինչը նշանակում է դրա դիմաց տալ ադրբեջանական անկլավները, բայց ընտրություններից հետո այլեւս այս մասին բաց տեքստով է հայտարարում. «Ինքը խառնաշփոթ է պարզապես ստեղծում, Ջերմուկի ու Արծվաշենի տարածքները բոլորովին տարբեր են: Նա մի հարթության մեջ է դնում, որ հիմնավորի իր հանձնումը: Ավելին, անգամ ուղղությունը նշեց, թե ինչպես պիտի զարգանա, այսինքն՝ եթե Արծվաշենին, Ջերմուկին, Սեւ լճին անդրադառնա, դա կլինի վերջում, սկզբում Իջեւանով կհասնի Տիգրանաշեն, հետո նոր կքննարկեն՝ ինչ անել: Սա նշանակում է, որ հարցն արդեն մանրակրկիտ քննարկվել է, բնական է նաեւ, որ Բայրամովը շտապեցնում է, քանի որ իրենք էլ գիտեն, որ Փաշինյանն իրականում չունի մեծամասնություն, ժողովրդի մանդատ՝ անկախ այն բանից, որ ինքը խոսում է այդ մասին, փաստն այն է, որ չունի մեծամասնություն, իսկ հետագայում լուրջ խնդիրների է բախվելու՝ թե՛ Իրանի հետ կապված, թե՛ Զանգեզուրի միջանցքն է առաջ գալու եւ այլն»:

Տավուշի հատվածում 3 անկլավի հանձնումը, Զոլյանի գնահատմամբ, աղետալի հետեւանքների կարող է հանգեցնել. «Երեք գյուղ, որոնք հենց մարզի կենտրոնում են, եւ շատ խնդրահարույց է լինելու: Ես հիշում եմ, որ 1991 թվականին ստիպված էինք ռուսաստանցի պատգամավորների հետ Նոյեմբերյանից Իջեւան գնալ Ստեփանավանով: Մի անգամ գնացինք անտառով, քիչ էր մնում կրակի տակ ընկնեինք, չընկանք միայն փորձառու վարորդի շնորհիվ, հետո ստիպված էինք Ստեփանավանով՝ ամբողջ Հայաստանով պտտվել: Այսինքն, այդ անկլավները փոքր են, բայց կարեւոր դիրքերում են, իսկ տնտեսական վնասների մասին չեմ խոսում, որ դրանք տալուց հետո պետք է ճանապարհներ կառուցել, բայց որքան էլ կառուցվի, այլեւս պաշտպանելու հնարավորություն չի լինի, եւ եթե նոր կոնֆլիկտ լինի, դրանք միանշանակ անցնելու են Ադրբեջանին: Արծվաշենի եւ ադրբեջանական անկլավների նշանակությունը տարբեր է, Արծվաշենի վերադարձի պահանջ անգամ չի դրվել արծվաշենցիների կողմից, եւ հայտնի չէ, թե ով կվերադառնա այնտեղ, եւ արդյոք կվերադառնա՞ որեւէ մեկը, ո՞ւմ պետք է համոզեն՝ անհասկանալի կարգավիճակում վերադառնալ Հայաստանից մեկուսացած տարածք, մինչդեռ ադրբեջանական անկլավները Հայաստանի ռազմավարական ճանապարհների վրա են, մեկը՝ դեպի Վրաստան, մյուսը՝ Իրան, եւ նրանց ռազմավարական արժեքը լրիվ այլ է»:

Քաղաքագետի կարծիքով, առաջիկայում ավելի է ուժգնանալու Փաշինյանի՝ պատերազմի սպառնալիքի լեքսիկոնը. «Որ եթե չտանք այդ անկլավները, պատերազմ կլինի, կկորցնենք մեր սուվերեն տարածքները եւ այլն: Ստացվում է, որ ինչքան շատ տարածք տանք Ադրբեջանին, այնքան շատ անկախ կլինենք»: Նա տարակուսած է՝ Փաշինյանը հրապարակավ ստում է իր ծրագրի համար. «Անհասկանալի էր հիշատակումը, թե Մինսկի խումբը դեռ քննարկում էր անկլավների հարցը, բայց, վստահեցնում եմ, այդ խումբը երբեք չի քննարկել, որովհետեւ հստակ մանդատ ունեին՝ լուծել միայն Ղարաբաղի հարցը»: Ի դեպ, Զոլյանը չի բացառում, որ առաջիկայում ադրբեջանական կողմը պահանջի նաեւ Մեղրիին հարակից Նռնաձոր գյուղը, որը նախկինում բնակեցված է եղել ադրբեջանցիներով եւ կոչվել է Նյուվադի:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՀՐԱՀԱՆԳՈՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐՆ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ

Ադախընտրական շրջանում՝ մայիսի 16-ին, Տաշիրը մերժել էր ՔՊ-ին՝ Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ կայացած քարոզարշավի ժամանակ: Քաղաքացիները վանկարկել էին՝ «Սամվել, վարչապետ», ՔՊ միտինգին ներկայացել էին «Ուժեղ Հայաստանի» դրոշներով, փորձել էին փակել ինչ-որ մեքենայի ճանապարհը, ինչը զայրացրել էր Սուրեն Պապիկյանին: Նա ոստիկանություն էր կանչել, եւ 10 անձի բերման էին ենթարկել: 10 ընդդիմադիր քաղաքացու ձերբակալությունը բացատրեցին «Նորաշեն եւ Մեծավան բնակավայրերում «Ուժեղ Հայաստան» դաշինքի մի խումբ աջակիցների կողմից ՔՊ կուսակցության նախընտրական քարոզարշավի բնականոն ընթացքը խոչընդոտելու» հանգամանքով: Քննչական կոմիտեն անմիջապես վարույթ նախաձեռնեց, այդ անձանց որպես մեղադրյալ ներգրավեցին: 10 անձից 6-ի դեպքում դատարանը բանտային կալանք սահմանեց, 4-ին՝ տնային կալանք: Հաղորդեցին, որ «կատարվում են ակտիվ քննչական գործողություններ՝ հանցագործությանը մասնակից այլ անձանց արարքներին իրավական գնահատական տալու ուղղությամբ»:

Պարզվում է՝ այդ գործով ոչ թե 10, այլ 13 մեղադրյալ կա: Քննչական կոմիտեից հետաքրքրվեցինք՝ նախաքննությունը շարունակվո՞ւմ է, փոխվե՞լ են խափանման միջոցները: «13 մեղադրյալ է, որից 2-ի խափանման միջոցը տնային կալանք է, մյուսներինն այլընտրանքային խափանման միջոցներ են, նախաքննության փուլում է»: Մեղադրյալներից 3-ի պաշտպանությամբ զբաղվում է փաստաբան **Զորի Բաբայանը**, որը մեզ ասաց, որ մեղադրյալների խափանման միջոցները փոխվել են, մի քանիսն ի սկզբանե կալանավորված է եղել 1 ամսով, երբ նախաքննական մարմինը միջնորդություն է ներկայացրել՝ կալանքը երկարացնելու համար, դատարանը մերժել է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՇԱՏ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՎԱՅՐԵՐ ԿԱՆ, Ի՞ՆՉ ԻՄԱՍՏ ՈՒՆԻ ՊԱՐՍԿԱԿԱՆԸ ԲԱՑԵԼԸ

ԿԳՄՍ նախարարությունը որոշել է հերթական ապազգային քայլն անել եւ հարվածել հայկական ինքնությանը: Օրերս ԿԳՄՍՆ-ից հաղորդագրություն տարածեցին, թե Հանրապետության հրապարակի ստորգետնյա տարածքների հետ կապված նոր նախագիծ են գործարկում, եւ «ճարտարապետական նախագծի հայեցակարգային առաջարկների հավաքագրման» մրցույթ է հայտարարվել՝ «բաց հրավեր»՝ ուղղված «Հանրապետության հրապարակում տեղակայված թանգարանային շենքում գործող Հայաստանի պատմության թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տարածքների ընդլայնման եւ զարգացման ճարտարապետական նախագծի գաղափարների ու հայեցակարգային առաջարկների հավաքագրմանը՝ դիտարկելով նաեւ Հանրապետության հրապարակի ստորգետնյա հնարավոր տարածքների ներառումը»: Ժամանակին այս հատվածում շինարարական աշխատանքներ իրականացնելիս հրապարակի տակ ինչ-որ հին շինության հետքեր են հայտնաբերվել, սակայն քանի որ նախկինները հայկական իշխանություններ էին, դրա մասին չթմբկահարեցին, որ չստացվի, թե Երեւանի հենց սրտում օտար բնակության հետք կա, որը հայկական չէ:

Պատմաբաններն ասում են, որ այս քայլով իշխանությունները, մասնավորապես՝ Նիկոլ Փաշինյանը, ցանկանում են հայ ժողովրդին ապացուցել, որ Երեւանում հայերից առաջ ապրել են պարսիկներ, քանի որ վերոնշյալ տարածքներում 1-2 դար առաջվա հետքեր են հայտնաբերվել՝ պարսկական ինչ-որ շուկա: Ի՞նչ արժեքավոր պատմական ժառանգություն կա հրապարակի ստորգետնյա մասում, որ իշխանությունները փորձում են Երեւանի Հանրապետության հրապարակը քարուքանդ անել, միլիարդներ վատնել այդ ամենի վրա եւ օտար բնակության հետքն ասպարեզ հանել: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ, Երեւանի պատմության թանգարանի նախկին տնօրեն **Արմինե Սարգսյանի** հետ:

- Ինչո՞ւ է ԿԳՄՍ նախարարությունը որոշել Հանրապետության հրապարակի ստորգետնյա տարածքների ներառմամբ թանգարանային համալիրի ընդլայնման ճարտարապետական նախագիծ իրականացնել: Ի՞նչ կա այնտեղ այդքան կարեւոր ու արժեքավոր: Պատմաբաններն ասում են, որ պարսկական հետք է այնտեղ, եւ իշխանությունը փորձում է հերթական անգամ հայ հանրությանը համոզել, որ Երեւանը հայկական քաղաք չէ:

- Հնագետները, երբ շատ տարիներ առաջ պեղումներ էին իրականացնում, անգամ ասում էին, որ, ըստ հետազոտությունների, այդ կառույցները անգամ մոնղոլական ժամանակներից են եկել, բայց քանի որ ես պեղողների շարքերում չեմ եղել, չեմ կարող նման բան պնդել: Ամեն դեպքում, ես մի բան կարող եմ հստակ նշել, որ տվյալ վայրում որեւէ արժեքավոր ժառանգություն չկա, այդ մասին փաստել են տարբեր հնագետներ: Դրանք այն կառույցները չեն, որոնք կարող են դառնալ թանգարանային մեծ համալիր: Եթե ցանկանում են արժեքավոր հայկական հետք գտնել, ապա Երեւանի տարածքում շատ ավելի հին եւ արժեքավոր հնավայրեր կան, որոնք կարելի է վերականգնել, նաեւ դարձնել տուրիստական այցելությունների վայր, ինչպես, օրինակ, ԽՍՀՄ տարիներին Կարմիր բլուրն էր: Կարմիր բլուրի տարածքը մի հրաշալի անտառապատ տարածք էր, որտեղ անդադար զբոսաշրջիկներ էին գալիս, նույնը Շենգավիթ հնավայրի մասին է, որն ունի հին պատմություն: Այն Երեւանի առաջին քաղաքատիպ բնակավայրն է եղել, որտեղ ապրել են մեր նախնիները: Ինչ վերաբերում է Կարմիր բլուրին, այն ուրարտական ժառանգություն է, իսկ Ուրարտու պետության ժառանգորդները մենք՝ հայերս ենք: Ի վերջո՝ ունենք Էրեբունի ամրոց, որը Երեւանի հիմնադրումն է, այնտեղից է սկսվում Երեւանը: Ամրոցը կարելի է բարեկարգել, ամրացնել, եւ այն ահռելի միջոցները, որոնք կիրառվելու են ինչ-որ անհայտ դամբարանների կամ ոչ կարեւոր պատմական հետքերի պեղումների համար, կարող են ուղղել հայկական հնավայրերի վերականգնմանը եւ բարեկարգմանը:

- Ձեր կարծիքով՝ ԿԳՄՍ նախարարությունն ինչո՞ւ է ցանկանում պարսկական հետքն ասպարեզ բերել եւ դրանք ի ցույց աշխարհի ներկայացնել: Կա մտավախություն, որ այս քայլով փորձում են ասել, թե Երեւանը հայկական պատմական քաղաք չէ:

- Նման միտք շրջանառելը մեծագույն անհեթեթություն կլինի: Իրականության հետ այդ ամենը ոչ մի աղերս չունի: Իհարկե, Երեւանում ապրել են պարսիկներ: 300 տարի Արեւելյան Հայաստանը եղել է պարսկական տիրապետության տակ, բայց պարսիկներն ուղղակի ժամանակավոր իշխել են, հետո արդեն, երբ 1827 թվականին ռուսական զորքերը հայ կամավորների հետ ազատագրեցին Արեւելյան Հայաստանը, ներառյալ՝ Երեւանը, այստեղ գրեթե իրանական էթնոսի մարդիկ չմնացին, ապրում էին բացառապես հայեր: Անգամ անհարմար եմ զգում պնդել, որ Երեւանում հայեր են ապրել, ախր ո՞նց կարելի է պատմական իրողությունները հիմնավորել, ամոթ է ուղղակի: Այս ո՞ւր հասանք:

- Ասում են, որ ահռելի գումարներ են հատկացնելու այս նախագծին՝ Երեւանի պատմության եւ մյուս թանգարանային տարածքներն ընդլայնելուն:

- Ես հստակ գումարների մասին տեղյակ չեմ, բայց տարբեր երկրներում կա փորձ, որ ստորգետնյա կառույցները վերանորոգելիս նաեւ ապակեպատում են անում, դա բավականին արժեքավոր բան է, մեծ միջոցներ են հարկավոր դրա համար: Պարզապես այստեղ, կրկնում եմ, խնդիրն այն է, որ հնագետներն այդ տարածքում պեղումներ են իրականացրել եւ պնդել, որ այնտեղ չկա որեւէ արժեքավոր բան:

Նյութերը՝
Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Լուության գինը՝ ամսական 1,5 մլն դրամ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի պաշտոնավարման շուրջ շարունակվում են դժգոհությունները՝ հանրային հնչեղություն ստացած մի շարք դեպքերում լռելու, ուշ արձագանքելու կամ միայն հանրային ճնշումից հետո արձագանքելու համար: Իսկ ՄԻՊ հրապարակային հայտարարությունները հաճախ վերացական են՝ բովանդակային հստակ գնահատականներից զերծ: Այս ֆոնին ուշադրության արժանի է Անահիտ Մանասյանի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած հայտարարագիրը, որը փաստում է միլիոնավոր դրամների հասնող եկամուտների, դրամական միջոցների եւ գույքի մասին: Մանասյանը հայտարարագրել է 2 բնակարան, որոնք գտնվում են Երեւանում, «Ֆորդ» մակնիշի մարդատար մեքենա, որոնք ձեռք է բերել մինչ պաշտոնավարումը, իսկ նախորդ տարվա ընթացքում «Ավանգարտ Ինվեստ» ՍՊԸ կառուցապատող ընկերության հետ 31 մլն 292 հազար դրամի պայմանագիր է կնքել, թեեւ հայտարարագրում հստակեցված չէ, բայց, հավանաբար, խոսքը հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու մասին է: Մանասյանը նախորդ տարեվերջին ունեցել է 10 հազար դոլար, 9 հազար 621 դոլար եւ 11 մլն 890 հազար դրամ ավանդ: Նրա բանկային հաշիվներին եղել են 32 մլն 138 հազար դրամ, 33 հազար 184 եվրո եւ 96 դոլար: Կանխիկ ունեցել է 200 հազար դրամ, 2 հազար 927 եվրո եւ 6 հազար 680 դոլար: Նրա եկամուտները կազմել են 20 մլն 57 հազար դրամ, որից 17 մլն 611 հազար դրամը՝ ՄԻՊ-ից, որպես աշխատավարձ, 1 մլն 291 հազար դրամը՝ ԵՊՀ-ից՝ որպես աշխատավարձ, իսկ մնացած գումարը բանկային ավանդներից ստացած եկամուտներն են: Փաստացի, ամեն ամիս Մանասյանը մարդկանց իրավունքների պաշտպանության համար, այսինքն՝ տվյալ դեպքում ոչնչի համար ՀՀ քաղաքացիների վճարած հարկերից ստանում է գրեթե 1.5 մլն դրամ (1 մլն 468 հազար դրամ) աշխատավարձ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԻՑ ԿԻՆ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՈՒՆԻ

«Մայր Հայաստան» կուսակցության անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Արեգնազ Մանուկյանը 2 ամսով կալանավորվեց՝ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մանվել Շահվերդյանի որոշմամբ: Նրան տեղափոխել են «Աբովյան» ՔԿՀ՝ կանանց կալանավայր: Նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասով (պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը): Սա Անդրանիկ Թեւանյանի մեղադրանքի շրջանակներում է: Մանուկյանի բնակարանում երկու անգամ խուզարկություն են կատարել:

Նիկոլ Փաշինյանն ակնհայտորեն թիրախավորել է «Մայր Հայաստան» կուսակցությունը: Նախ, Անդրանիկ Թեւանյանին կալանավորեցին՝ նույն հոդվածով, դեռ այն ժամանակ գրել էինք, որ հաջորդ «զոհը» լինելու է Արեգնազ Մանուկյանը, որն իբր ԱԺ փակ նիստից տեղեկություններ է փոխանցել Թեւանյանին, վերջինս էլ այն փոխանցել է ռուսներին՝ դրա դիմաց 620 հազար դոլար փող ստանալով: Հետագայում, իհարկե, ասվեց, որ ոչ թե պետական գաղտնիք, «այլ տեղեկություններ են փոխանցվել»:

Իշխանությունները սիրում են ճամարտակել կանանց իրավունքների մասին, բայց Նիկոլ Փաշինյանի իշխանության այս 8 տարիներին բազմաթիվ կին քաղբանտարկյալներ ունեցավ Հայաստանը: Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար **Մանուկ Սուքիասյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. ««Մայր Հայաստանը» ստեղծման օրվանից ի վեր, թե՛ փողոցային պայքարում, թե՛ ընտրական զարգացումների մեջ, թե՛ սոցիալական հարցերի մասին խոսելիս՝ կարմիր գծերի թանկացում եւ այլն, բազմավեկտոր եւ ինստիտուցիոնալ պայքար է մղել, ինչպես նաեւ՝ գաղափարական ընդդիմադիր ամենասուր ուժերից մեկն է եղել, որի առաջնորդը ԲՀԿ ցուցակով երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանն էր: Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունն իշխանության կոկորդում մնացած ոսկոր է: Մենք նաեւ հաջողություններ արձանագրեցինք Գյումրու եւ Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններում, հետեւաբար՝ այս իշխանության համար հենց «Մայր Հայաստանն» է թիրախ դարձել, էլ ո՞ր ուժը, եթե ոչ «Մայր Հայաստանը»: Իշխանությունը փորձում է կազմալուծել դիմադրության բոլոր օջախները: Գագիկ Ծառուկյանի հետ համատեղ, նույն ցուցակով մասնակցելը Փաշինյանի իշխանության համար խնդիրն առավել պրոբլեմատիկ դարձրեց: Ինչպես տեսանք՝ թիրախավորվեցին Գագիկ Ծառուկյանը, Անդրանիկ Թեւանյանը, Արեգնազ Մանուկյանը: Իշխանությունների այս արձագանքը մեզ համար «օրինաչափ» է դարձել: Արեգնազ Մանուկյանը կին է, անչափահաս երեխայի մայր է, մենք՝ բոլորս, ականատես եղանք, թե ինչպես նրա բնակարանը խուզարկեցին: Բայց նա երկու հարցաքննություններին էլ ներկայացել է կամավոր, առանց ինչ-որ խնդրի, բայց կա հստակ միտում՝ անտեսել անչափահասի ծնող լինելու հանգամանքը: Իշխանությունը ռեպրեսիաների շքերթ է սկսել, այս ամենը դրա շարունակությունն է: Այս ամենը պետք է բոլոր իրավապաշտպանների, ինչպես նաեւ՝ միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում հայտնվի»:

ԿԻՍՏ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞Ռ ՏՆՏԵՍԱՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կառավարության հերթական նիստի ժամանակ Փաշինյանը հերթական անգամ փայլեց իր տնտեսագիտական գիտելիքներով, նա իր լսարանին՝ կառավարության անդամներին եւ կառավարության նիստին ներկա եւս մի քանի տասնյակ մարդու ուղեղների հետ կատարեց այն, որն այլ պայմաններում կարելի էր բանականության բռնաբարություն անվանել: Բայց այս դեպքում մենք չենք կարող համարել, որ գործ ունենք բռնաբարության հետ, քանի որ վերոնշյալ միջոցառման մասնակիցները դա անում են կամավորության հիմքով՝ համարելով, որ դրա համար իրենք վճարվում են եւ քանի որ վճարվում են, Փաշինյանը կարող է, իրավունք ունի իրենց ուղեղների, բանականության հետ վարվել այնպես, ինչպես ցանկանում է: Բացառություն է, թերեւս, Գեւորգ Պապոյանը, որն օգտակարը համատեղում է հաճելիի հետ, նա իր վարքով այնպիսի տպավորություն է ստեղծում, որ այդ ակտից ինքը ոչ միայն ֆինանսական շահ ունի, այլեւ հոգեւոր-էմոցիոնալ բավարարություն է ստանում:

Փաշինյանը տեսնում է, որ իր բոլոր փորձերը՝ լուծելու Ռուսաստանի սահմանած պատժամիջոցները, որեւէ արդյունք չեն տալիս, Ռուսաստանը չի բացում իր շուկան հայաստանյան ֆերմերների, արտադրողների եւ արտահանողների համար: Դիվերսիֆիկացիայի բոլոր փորձերը եւս էական արդյունք չեն տալիս, ոչ մի երկիր պատրաստ չէ՝ անմնացորդ իր շուկան բացել Հայաստանից կատարվող արտահանումների համար, դրա համար պետք են ենթակառուցվածք, մարկետինգ՝ սպառողները պետք է ճանաչեն հայկական արտադրանքը, պետք է համոզվեն դրա համեղ կամ օգտակար լինելու մեջ, մի բան, որ արդեն տեղի էր ունեցել ռուսական շուկայում: Այն իր գնով պետք է ավելի մրցունակ լինի մրցակիցներից: Մարդիկ անծանոթ ապրանքներ չեն գնում, իսկ սպառողին սեփական ապրանքը ներկայացնելու համար ժամանակ եւ ամենակարեւորը՝ հսկայական միջոցներ են պետք, ինչը հայաստանյան արտադրողները չունեն եւ չեն էլ ունենա՝ իրենց սահմանափակ հնարավորությունների պատճառով: Մի խոսքով, Փաշինյանը հասկանում է, որ մարել է հազարավոր հայ ֆերմերների, վերամշակողների եւ արտահանողների օջախի ծուխը, մի բան, որը նրա մոտ ամենալավն է ստացվում: Եվ այս պայմաններում ի՞նչ է անում նա. զբաղվում է հայաստանյան հասարակությանը տնտեսագիտական դասեր տալով եւ դա անում է կառավարության նիստի մասնակիցների լսարանի առաջ: Նրանք են իր առաջին ուսանողները, իր առաջնային լսարանը:

«Մեր խնդիրն էն ա, որ մենք ժամանակ ունենք առաջիկա մի տարվա ընթացքում պատրաստվել էն իրավիճակին, որ մենք ծիրանի եւ մյուս գյուղմթերքների արտահանումները մաքսիմալ դիվերսիֆիկացնենք, որպեսզի մենք որեւէ մեկ շուկայից անհամաչափ կախվածություն չունենանք: Ի կատարումն իրական Հայաստանի գաղափարախոսության էն թեզի, որ անկախությունը՝ քչերից կախվածությունը փոխարինելն է շատերից կախվածությամբ: Այսինքն, եթե մենք տասնյակ շուկաներ որեւէ բան արտահանում ենք, էդ շուկաներից որեւէ մեկում մեզ համար չկանխատեսված իրադարձությունը մեր շուկայի վրա չի ազդելու»,- ահա, այսպես է խոսում մեր օրերի Ադամ Սմիթը: Թող մեզ ների անգլիացի տնտեսագետը՝ նման վիրավորական համեմատության համար, բայց միթե ավելի վիրավորական չէ այն, որ մի մարդ, որը նստել է կառավարության ղեկավարի աթոռին, արտաբերում է, չասենք՝ մտքեր, այլ բառեր, որոնք ալերգիկ ցան են առաջացնում գրագետ մարդկանց մոտ եւ կարող են համարվել հանրային բանականության բռնաբարություն: Սա նախ նշանակում է, որ առաջիկա մեկ տարվա ընթացքում Հայաստանից գյուղմթերքի արտահանումներ չեն լինելու, սրանով մարդը խոստովանում է, որ ռուսական շուկան հայտարարվում է վերջնականապես փակված՝ սալորի, դեղձի, խաղողի, բանջարեղենի, ձկնեղենի, պահածոների, չրերի, ծաղիկների եւ այլ գյուղմթերքների արտահանողները թող մոռանան ռուսական շուկայի եւ, ընդհանրապես, իրենց ապրանքն իրացնելու հնարավորության մասին: Լավագույն դեպքում կարող են վարդի թերթեր ուղարկել ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսին, որը դրանից վարդի մուրաբա կպատրաստի: Ասում է՝ եթե մեր ապրանքներն արտահանվում են տասնյակ շուկաներ, իսկ ինչո՞ւ տասնյակ, ինչո՞ւ ոչ հարյուրավոր, իսկ ավելի լավ չի՞ լինի՝ հազարավոր շուկաներ, մի՞թե այդպես ավելի ապահով չէ:

Իր կառավարության եւ անձամբ իր կողմից վարվող քաղաքականության ձախողումը նա համարում է Հայաստանի ինքնիշխանության եւ անկախության ամրապնդում. «Սա նաեւ Հայաստանի ինքնիշխանության, անկախության եւ պետականության ամրապնդման ճանապարհն է: Մեր տնտեսվարողները պետք է հարմարվողականություն դրսեւորեն. շուկաներից յուրաքանչյուրն ունի պահանջների իր բանաձեւը եւ ճաշակների իր բանաձեւը, եւ մեր արտահանողները պետք ա հարմարվեն: Հիմա մի երկիր կա, որտեղ սպիտակ ծաղիկն ավելի շատ ա վաճառվում, քան վարդագույնը կամ՝ հակառակը: Այսինքն, ջանք պետք ա ներդրվի՝ շուկայի ստանդարտներին, պահանջներին համապատասխանելու համար»: Իսկապես մտքի տիտան, այլ բան չես ասի:

Փաշինյանը չգիտի, թե ինչ է ինքնիշխանությունը, ինչ է ինքնիշխան երկիրը, դա ոչ միայն այն երկիրն է, որն ինքնիշխան՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք եւ հնարավորություն ունի: Երկրի ինքնիշխանությունը չափվում է նաեւ նրա տնտեսական ինքնուրույնությամբ, ինքնաբավությամբ, սեփական պահանջներն ինքնուրույն՝ սեփական միջոցներով հոգալու հնարավորությամբ: Փաշինյանն իր գործողություններով, որոնք ուղղված են ինչպես Հայաստանի խոշոր, այնպես էլ միջին եւ փոքր ձեռնարկությունների, ձեռներեցների դեմ, փակում է երկրի՝ ինքնուրույն փող աշխատելու հնարավորությունը՝ նրան անմիջական կախվածության մեջ դնելով արտաքին աջակցությունից, պարտքով ու վարկով փող տվողներից: Փաշինյանը Հայաստանը վերածել է մի երկրի, որն ամեն մեկին տեսնելիս ասում է՝ իսկ դուք մեզ կօգնե՞ք, դուք մեզ ինչո՞վ կարող եք օգնել, մեզ փող կտա՞ք, մեզ պարտք կտա՞ք: Երկարում է ձեռքը եւ դողացող ձայնով կրկնում՝ տուր միլիոն, տուր միլիոն, տուր միլիոն: Ահա թե ինչպիսի անկախ ու ինքնիշխան երկիր է դարձրել նա Հայաստանը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԵԳԵԼՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱ

Երբ լրագրողը փորձում է ճշտել վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի վերաբերմունքը կաթողիկոս Գարեգին Բ-ին պաշտոնանկ անելու վերաբերյալ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի՝ «հնարավոր ամեն ինչ անելու» խոստման առումով, վերջինս աննախադեպ միտք է հայտնում. «Թող այդ պրանկերները (խոսքը Վովանի ու Լեքսուսի մասին է՝ Վ. Ս.) ավելի լավ է՝ ուղիղ զանգահարեն Կտրիճ Ներսիսյանին կամ Սամվել Կարապետյանի անունից խոսեն բոլոր պաշտոնատար անձանց հետ, տեսնենք՝ նրանք ինչ կպատասխանեն, եւ դրանից հետո արդեն եզրակացություններ կանենք»: Լսելով այս պատասխանը՝ մի պահ չընկալեցի ասվածը, որովհետեւ դրանում միաժամանակ միմյանց հակասող երկու դատողություն էր առկա: Մի դեպքում ռուս պրանկերներին (զվարճախոս, չարաճճի մեկը) առաջարկում է զանգահարել կաթողիկոսին: Իսկ մյուս դեպքում՝ Սամվել Կարապետյանի անունից խոսել պաշտոնյաների հետ: Ենթադրաբար, նկատի ունի ԵՄ պաշտոնյաներին:

Եթե առաջարկեր միայն երկրորդ տարբերակը, միտքն ընկալելի կլիներ ու առաջին պահին՝ նույնիսկ հետաքրքիր: Իսկապես, իրենց ինչպե՞ս կպահեին ԵՄ չինովնիկները Ռուսաստանում մի քանի միլիարդ դոլար վաստակած հայ գործարարի հետ: Չնայած դժվար չէր լինի կռահելը՝ հաշվի առնելով, որ վերջինս քաղաքական պայքարի մեջ էր մտել իրենց հովանավորած «խիզախ» հետեւորդի դեմ: Այնպես որ, նույնիսկ այս դեպքում եզրակացություն անելուն դա չէր նպաստելու՝ առանց դրա էլ հնարավոր էր եզրակացություն անել: Բայց, իհարկե, հրապարակավ չի անելու, քանի որ պրանկերների զոհը, նախ, եվրոպացի պաշտոնյա էր՝ թեկուզ ոչ Եվրամիության անդամ պետության քաղաքացի: Եվ, երկրորդ, վերջինս ազգությամբ թուրք է, եւ այդ առումով շատ ճիշտ ընտրություն էին կատարել ռուս պրանկերները: Որքան էլ ՀՀ վարչապետի աթոռից կառչած անձը լրագրողների համար դասախոսություն կարդար «արհեստականորեն բորբոքվող հույզերին» չտրվելու մասին:

Ինչ վերաբերում է կաթողիկոսին զանգելու մասին գաղափարին, ապա դա, նախ, անիմաստ կլիներ, որովհետեւ պրանկերները կլսեին այն, ինչ կարող են կարդալ լրատվական կայքերում՝ երբ կաթողիկոսը ժամանակ առ ժամանակ ելույթներ է ունենում: Ավելին նա չէր ասելու, քանի որ վերջինս սահմանափակված է հոգեւոր իր կարգավիճակով: Կարելի է նույնիսկ զարմանալ, որ դա չի հասկացել այն անձը, որն իրեն համարում է ամենագետ, որովհետեւ միայն ամենագետը կարող էր վարել կառավարության ու պետական այլ կառույցների բոլոր նիստերն ու անպայման սեփական խոսքն ասել դրանցում:

Եվ, վերջապես՝ Թուրքիան ներկայացնող Ֆերիդուն Սինիրլիօղլուի՝ «հնարավոր ամեն ինչ անելու» պատրաստակամության հարցը: Նախ, ինքը դա ասում էր «Փաշինյանին» մասնավոր զրույցում կամ գոնե այդպես էր կարծում: Երկրորդ. դա ասում էր օտար պետության այն ղեկավարին, որն իրեն վիրավորված չէր զգում, երբ իրեն թուրք էին կոչում: Ի դեպ, Փաշինյանը երեւի տեղյակ չէր, որ այդ երկրում վիրավորական է «հայ» անվանվելը, ու դրա համար կարող են դիմել դատարան, էլ չասած՝ մինչդատական «մուշտի տալու» մասին: Եվ, վերջապես, երրորդ. եթե եվրոպական երկրների ու Եվրամիության ղեկավարներն անընդհատ պաշտոնապես աջակցություն են հայտնում Փաշինյանին, ապա ԵԱՀԿ գլխավոր քարտուղարն ինչո՞ւ չէր կարող անել նույն բանը: Չմոռանանք, որ ՀՀ ներքին գործերին եվրոպական միջամտությունն ամենաբարձր մակարդակի ինքնիշխանության դրսեւորում է: Ի տարբերություն, ասենք, ռուսական չեզոքության, ինչը Հայաստանի անվտանգային սպառնալիքների աղբյուր է: Դա, իհարկե, աննորմալություն է, բայց աննորմալ իշխանության պարագայում աննորմալ բանը շատ էլ բնական երեւույթ է: Երեւի պետք էր 2018-ին Նիկոլին կարգեինք վարչապետ, որպեսզի մեր օրերում «զարգացում ապրեր» հեգելյան դիալեկտիկան:

ԱԲ-ի տեղեկանքը. «Հեգելյան դիալեկտիկան գերմանացի փիլիսոփա Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի (1770-1831) մտածողության համակարգն է, որի համաձայն՝ ամեն ինչ զարգանում է հակասությունների եւ դրանց հաղթահարման միջոցով: Այն աշխարհը եւ պատմությունը դիտարկում է ոչ թե անշարժ, այլ մշտական փոփոխության եւ շարժման մեջ»:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀԱՐՁԱԿՈՒՄ

ԹՈՂ ԳԱՅԼԵՐԸ ՄՏԱԾԵՆ

Երկու օր առաջ գայլերը հարձակվել էին Գորիս համայնքի Քարահունջ գյուղի բնակիչների վրա, կծել 6 հոգու, որոնցից մեկն իր տան բակում խաղացող 3 տարեկան երեխա է եղել: 72 տարեկան տղամարդու դեմքն ամբողջությամբ հոշոտել էին, նրան պետք է տեղափոխեին Երեւան՝ վիրահատությունները շարունակելու համար: Ականատեսները նշում են, որ գայլերի հարձակվում է մարդկանց վրա, ես դա չեմ պատկերացնում: Այդ մասով տեղեկատվություն ավելի շատ պետք է լինի, որ մենք՝ որպես մասնագետ, կարողանանք ասել, թե ինչն է եղել պատճառը: Կատաղություն հիվանդություն կա, այդ դեպքում աղվեսն էլ կարող է կծել մարդուն՝ վարակվի, գայլն էլ, շունն էլ:

- Հնարավո՞ր է վայրենացած շների հետ գործ ունենք, որովհետեւ ասում են՝ Գորիսի կողմերում շատ կան վայրենացած շների ոհմակներ:

- Միայն Գորիսի կողմերում չէ, վայրենացած շների ոհմակներ շատ տեղերում կան, որ ոհմակով են: Բայց դե՝ պետք է նկարագիրը: Տեսանյութը տեսա, սակայն դա բավական չէ՝ հստակ բան ասելու համար: Նկարագրածով ու եղած տեղեկատվությամբ ավելի շատ նման է կատաղությամբ վարակված գայլի: Եթե մեկ գայլ է, ամենայն հավանականությամբ, կատաղություն ունի, հիվանդություն է, ինչը վտանգավոր է: Անկախ նրանից՝ մենակ է, թե մենակ չէ, շատ վտանգավոր է, կշարունակի հարձակվել թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների վրա: Միայն նման դեպքում է գայլը հարձակվում:

- Դուք երկար տարիներ ծրագրեր եք իրականացրել՝ բնապահպանական հատուկ տարածքներ ձեւավորելու համար, այդ թվում՝ Զանգեզուրի կենսոլորտային համալիրը, որի մեջ մտնում են Զանգեզուր արգելավայրը, Շիկահողի արգելոցը, Սեւ լճերի տարածքը: Իսկ հնարավո՞ր է գայլի անսովոր պահվածքը կապված լինի նաեւ մեր տարածաշրջանում վերջին ռազմական գործողությունների հետ՝ Արցախի տարածքում, Սյունիքի հատվածում անտառային տարածքներում տեղի ունեցած պատերազմի հետ:

- Ոչ, դա կապ չունի: Սահմանամերձ տարածքներում ազդեցությունը կարող է լինել այն, որ ապօրինի որսագողություն անեն այդ սահմանապահները, կամ ականներ լինեն, դրանից կենդանիները տուժում են, բայց որ Արցախից գայլը գա հասնի այստեղ, հարձակվի՝ հեքիաթներ են:

- Իսկ գայլերի միգրացիայի ճանապարհների մասով որեւէ տեղեկատվություն ունե՞ք:

- Կենդանիներ կան, որ միգրացիա անում են, կենդանի կա, որ չի անում: Ընձառյուծն անում է միգրացիա՝ որոշ ժամանակահատվածի ընթացքում, ու եթե գտնում է մի վայր, որտեղ ինքը կեր ունի՝ հիմնականում բեզոարյան այծերը, մնում է այնտեղ: Օրինակ, Խոսրովում ունենք, ինքն արդեն 6 տարուց ավել այնտեղ է: Գայլերը մեծ միգրացիաներ չեն անում, հիմնականում անասնապահական ռեգիոններում են լինում, այնտեղ են կուտակվում: Ամբողջ Հայաստանում կան գայլեր, իհարկե, բայց Սյունիքի մարզում բարձր լեռնատափաստանային, լեռնային գոտիներում են լինում, որտեղ անասնապահությամբ են զբաղվում, Շիրակի, Արագածոտնի մարզում են լինում:

- Ձեր կազմակերպությունը տեսահսկման միջոցով հետեւում է հովազի տեղաշարժին: Արդյոք մտահոգիչ չէ՞, որ այն արեալում, որտեղ հովազ կա, կան նաեւ գայլեր:

- Գայլերը թող մտածեն: Ի դեպ ասեմ, Սյունիքի տեղացիները, որտեղ կա ընձառյուծ, ուրախ են, որ ընձառյուծ կա, քանի որ այն իրենց ընտանի կենդանիներին ձեռք չի տալիս: Հայաստանում համարյա դեպք չի եղել, որ ընձառյուծը հարձակվի, երկու դեպք է եղել, որ ձիու քուռակ է տարել, այդ երկու դեպքն են՝ 15 տարվա ընթացքում: Ինքը հիմնականում սնվում է հզոր, վայրի կենդանիներով: Իսկ գայլերը, իհարկե, հարձակվում են, եթե այդ տարածքում ընձառյուծ է լինում, գայլերին այդ տարածքից քշում է, այսպես ասած:

- Այդ դեպքում ինչո՞վ եք բացատրում, որ Սյունիքում ընձառյուծ կա, ու գայլեր էլ կան:

- Սյունիքն այնքան մեծ տարածք է, շատ բարձր ռելիեֆ, ընձառյուծը՝ որտեղ, Գորիսը՝ որտեղ, բավականին հեռու է այն վայրերից, որտեղ ընձառյուծն է լինում: Գայլերը կարող են Մեղրիում կամ Շիկահողի հատվածում հարձակվել, եթե հարձակվեն, այնտեղ մոտիկ է ընձառյուծի տարածքին, բայց Գորիսում չի լինում:

- Գորիս համայնքում հարձակման այս դեպքի հետ կապված՝ Ձեր կազմակերպությունը որեւէ մասնակցություն ունենալո՞ւ է, մասնագետ ուղարկելո՞ւ եք, թե՞ պետական մարմիններն են պատասխանատու՝ այս հարցով զբաղվելու:

- Դա մեր գործը չէ, կան պետական մարմիններ, Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին, կան անտառտնտեսություններ, կան էկոպարեկներ, եթե դա իրական է, դա իրագործվել է, բայց սա եթե գյուղում է եղել, մենք նման հարցերով չենք զբաղվում: Եթե դիմեն պետական մարմինները, մենք շրջակա միջավայրի նախարարության հետ ենք համագործակցում՝ եթե դիմեն մեզ, Կենդանաբանության ինստիտուտին, որ մասնակցենք, իհարկե, ուղարկում ենք մասնագետներ, հետազոտում են եւ տալիս են համապատասխան կարծիք:

- Իսկ համագործակցության առումով Ձեզ դիմե՞լ են՝ հենց այս հարձակման հետ կապված:

- Ոչ, չեն դիմել:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՈՒ ԵՆ ՑԱՆԿԱՑԵԼ ՀԱՐՁԱԿՎԵԼ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՎՐԱ

Միացյալ Նահանգների ութ բնակչի հուլիսի 9-ին ներկայացվել է մեղադրանք՝ դավադրության եւ սպանության, ինչպես նաեւ՝ ահաբեկչական գործողություններ իրականացնելու հոդվածներով: Համաձայն ամերիկյան մամուլում տեղ գտած հրապարակման, մեղադրյալներն իբր ցանկացել են հարձակում կատարել Սպիտակ տան վրա՝ նախագահ Դոնալդ Թրամփի ծննդյան օրը՝ հունիսի 14-ին Հարավային մարգագետնում կազմակերպված UFC Freedom 250 մրցաշարի ժամանակ:

Մեղադրանքները ներկայացվել են երկու առանձին ուղղությամբ՝ ահաբեկիչներին նյութական օգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ՝ դաշնային կառավարության տարածքում պաշտոնատար անձի սպանությունը կազմակերպելու համար: Ըստ էության, ամերիկյան իրավապահները փորձում են հուլիսի 9-ի մեղադրանքով դավադրությունների հետ կապված քրգործեր հարուցել: Պաշտոնական տվյալների համաձայն, խմբի անդամներն ունեցել են որոշակի մարգինալ դավադրական մտադրություն եւ հույս են ունեցել, որ Սպիտակ տան վրա հարձակվելով՝ ամերիկյան դաշնային կառավարությունում ապակայունություն կմտցնեն: Դավադրությունները նախապատրաստվել են մայիսից: Խումբը սկսել է կուտակել գումար, հրազեն եւ զինամթերք, զրահաբաճկոններ, պայթուցիկներ, ԱԹՍ-ներ, բժշկական սարքավորումներ, կապի միջոցներ եւ այլն: Մեղադրյալներից մեկը պատմել է, որ մտադրություն են ունեցել պայթուցիկներով ԱԹՍ-ներ ուղարկել մրցաշարի վայր, իսկ հետո՝ գնդակահարել մրցավայրից հեռացող հանդիսատեսին, երբ նրանք փախուստի դիմեն:

Ֆեդերալ դատախազները հայտարարում են, որ խումբը ցանկացել է սպանել նախագահ Թրամփին, փոխնախագահ Վենսին, ֆեդերալ նշանակության այլ պաշտոնյաների, Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուին, միլիարդատեր Իլոն Մասկին, այլ հայտնի եւ բարձրաստիճան անձանց: Խմբի անդամներից 7-ին ձերբակալել են հունիսի 11-21-ն ընկած ժամանակահատվածում: Սպիտակ տան վրա նախատեսված հարձակման կազմակերպիչը եղել է Մեքսիկայից ներգաղթած Աբրահամ Էմոսիլիո Ալվարեսը: Նրան ձերբակալել են Նեբրասկա նահանգում, մյուս անդամներին՝ Օհայո, Միսուրի, Կալիֆոռնիա եւ Վաշինգտոն նահանգներում: Այս շաբաթ էլ ձերբակալվել է 21-ամյա մեկ անձ՝ Արեւմտյան Վիրջինիայից, որը նույնպես համարվում է այդ խմբի անդամ: Հետաքննությունների դաշնային բյուրոն իմացել է նախատեսվող ահաբեկչական հարձակման մասին դավադրության մասնակիցներից մեկի մոր միջոցով, որն անհանգստացել է եւ ահազանգել ոստիկանություն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պարգեւավճարների համար փող կա, վթարային տների ցանկը ճշտելու համար չկա

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին գրավոր հարցում եմ արել, թե որքան է Տավուշի մարզում 3-րդ, 4-րդ, 5-րդ կարգի վթարային առանձնատների, բազմաբնակարան շենքերի թիվը, դրանք որ բնակավայրերում են: Մարզպետարանից պատասխանել են. «Ձեր տեղեկատվության պահանջին կրկին անգամ տեղեկացնում եմ, որ 3-րդ, 4-րդ, 5-րդ կարգի վթարայնություն ունեցող տների մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է 5-10 տարին մեկ թարմացման, այն իրականում մեծածավալ աշխատանք է, եւ ներկայում թարմացված տեղեկատվություն չունենք, համայնքների ղեկավարները ստացել են համապատասխան առաջարկություն՝ ցուցակները թարմացնելու վերաբերյալ մասնագիտական աշխատանք պատվիրելու համար, սակայն գործընթացը պահանջում է մեծ ֆինանսական ռեսուրսներ»:

Ոչ արդյունավետ աշխատող բարձր պաշտոնյաների համար պետբյուջեում միլիարդավոր դրամների պարգեւավճարների փող կա, սակայն սահմանամերձ Տավուշի վթարային տների ցանկը ճշտելու համար փող չկա: Եվ անգամ գրագետ աշխատող չկա, որ հայերեն ու հասկանալի տեքստ գրի՝ հարցումներին ի պատասխան, բայց տեսեք, թե ինչպես են ցուցադրում, որ արդեն բարկանում են՝ «կրկին անգամ տեղեկացնում եմ» արտահայտությամբ: Նկատենք. «կրկին անգամ» արտահայտությունը խորթ է մեր լեզվին, պետք է լինի՝ «կրկին տեղեկացնում եմ», եւ, այո՝ կրկին եւ բազմակի հարցումներ ենք անելու, որպեսզի հանրությանը տեղեկացնենք, թե ինչ վիճակում է բնակֆոնդը, եւ ինչպես է աշխատում մարզպետարանը:

Որտե՞ղ է ավարտվում պատմական ճշմարտությունը

Էլիզաբեթ Կոստովայի՝ 2005 թվականին հրատարակված «Պատմաբանը» վեպը չարդարացրեց նրա ստեղծագործություններին սպասողների ակնկալիքները: Գրական աշխարհը սպասում էր, որ Դրակուլայի թեմայով հերթական վարիացիան կդրվի ընթերցողի սեղանին: Սակայն ստացվեց բացարձակապես այլ մասշտաբի գործ: Ի դեպ, վեպի վրա Կոստովան աշխատել էր ոչ պակաս, քան տասը տարի, եւ արդյունքում ստացվել է անսովոր պատմական թրիլլեր:

Դա գիրք է, որն ընթերցողին ստիպում է մտորել պատմական հիշողության, գիտնականի բարեխղճության եւ պատասխանատվության, ինչպես նաեւ՝ ներկայի մեջ անցյալի միջամտության մասին, եւ, թերեւս, բովանդակային խորքն է, որ ապահովում է, որպեսզի նույնիսկ քսան տարի անց «Պատմաբանը» շարունակի գրավել ընթերցասեր հանրությանը: Վեպը միավորում է ակադեմիական ու ճամփորդական արձակը, դետեկտիվն ու ընտանեկան ասքը: Կան նաեւ փիլիսոփայական մտորումներ: Ու այս ամենը Դրակուլայի մասին առասպելը դարձնում է մարդկային պատմության մի ամբողջական մետաֆորա:

Վամպիրիզմը վեպում առանցքային թեման չէ, իսկ Դրակուլան, հրեշ լինելուց բացի, նաեւ որպես պատմական չարիք է ներկայացվում: Վեպը մի տեսակ դառնում է ինտելեկտուալ հետաքննություն, որտեղ հին փաստաթղթերի որոնումները պակաս վտանգավոր չեն, քան գերբնական ուժերի հետ հանդիպումը: Կոստովան անդրադառնում է Վլադ 3-րդ Ցեպեշի պատմական կերպարին եւ շարադրանքի ընթացքում աստիճանաբար ջնջում է վավերագրության եւ գեղարվեստական հորինվածքի միջեւ տարբերությունը: Դա էլ հենց ընթերցողին ստիպում է մտորել՝ իսկ որտե՞ղ է ավարտվում արխիվային ճշմարտությունը, ու սկսվում գրական երեւակայությունը: Վեպի համար արժեքավոր է նաեւ այն, որ հիանալիորեն օգտագործված են հին ժամանակների նամակները, օրագրերը, քարտեզներն ու գիտական գրականությունը, գրադարանային մատենագիտությունը: Ընթերցելիս գալիս է մի պահ, որ ընթերցողին թվում է, թե ինքը մասնակիցն է իրական պատմական հետազոտության: Կոստովայի համար պատմությունը երբեք անվտանգ դիսցիպլինար գիտություն չէ: Անցյալի ցանկացած հետազոտություն նրա համար դառնում է վտանգավոր հետաքննություն, որտեղ կարող ես առերեսվել դավադրությունների հետ, նույնիսկ՝ դառնալ որոշակի ուժերի թիրախ:

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐՈՎ ԴԻՄԵԼ ԵՄ 3 ԿԱՌՈՒՅՑԻ

*Իմ զրուցակիցն է երիտասարդ գրող, հրապարակախոս, «Լեռնապատ» հայրենակցական միության նախագահ **Աշոտ Դալլաթյանը**:*

Ս եր զրույցի թեման սոցիալական հարթակներն են, որոնք մարդկանց մտածողության, վարքագծի ու խոսքի մշակույթի վրա ազդելու հզոր միջոց են դարձել: Ցավոք, այդ հարթակներում հաճախ գերիշխում են հայհոյանքը, ատելության խոսքը, նվաստացումն ու բռնության կոչերը: Գրական հայերենը, քաղաքակիրթ բանավեճն ու դիմացինի նկատմամբ հարգանքը հետին պլան են մղվել, գռեհիկ խոսքն ու աղմուկը՝ զբաղեցրել դրանց տեղը:

- Ասում են՝ մարդու խոսքն իր հայելին է: Եթե այդպես է, ապա մեր սոցիալական հարթակներն այսօր ինչ են պատմում մեր հասարակության մասին:

- Այնքան էլ հաճելի պատկեր չեն ներկայացնում: Իհարկե, համացանցում շատ լուսավոր, կրթական ու հետաքրքիր էջեր կան, բայց դրանց կողքին օրեցօր շատանում է կոպտությունը: Մարդիկ երբեմն մրցում են ոչ թե խելքով կամ գաղափարով, այլ՝ նրանով, թե ով ավելի ծանր բառ կասի կամ ավելի շատ մարդու կվիրավորի: Ամենացավալին՝ դա սկսում է ընկալվել որպես բնական երեւույթ: Մինչդեռ՝ թվային աշխարհում էլ մարդ պետք է մարդ մնա:

- Լավ խոսք կա. «Բառը նետ է. արձակելուց հետո ետ չես բերի»: Այսօր այդ պարզ ճշմարտությունը մոռացվել է:

- Շատերի համար, ցավոք, այո: Սոցցանցը մարդկանց մոտ երբեմն ստեղծում է անպատժելիության պատրանք: Էկրանի հետեւում ավելի հեշտ է վիրավորել, պիտակավորել, ծաղրել: Բայց վիրավորական խոսքը չի մնում միայն էկրանի վրա: Այն հասնում է իրական մարդկանց, իրական ընտանիքների, իրական երեխաների: Բառը կարող է բուժել, կարող է նաեւ երկար տարիների վերք թողնել: Պատճառները շատ են: Մի կողմից՝ մարդիկ փորձում են հնարավորինս արագ ճանաչում ձեռք բերել: Երբ տեսնում են, որ սկանդալը հազարավոր դիտումներ է հավաքում, իսկ խաղաղ, խելացի խոսքը՝ ոչ, շատերը գնում են ամենահեշտ ճանապարհով: Տարիներ շարունակ թուլացել է խոսքի մշակույթի նկատմամբ պահանջը: Եթե ընտանիքում, դպրոցում, հասարակական կյանքում քիչ ենք խոսում փոխադարձ հարգանքի մասին, դա վաղ թե ուշ երեւում է նաեւ թվային միջավայրում:

- Ատելությունն ատելությամբ չի հաղթահարվում: Այսօր հակառակն ենք տեսնում՝ վիրավորանքին պատասխանում են վիրավորանքով: Որտե՞ղ կկտրվի այդ շղթան:

- Այնտեղ, որտեղ մեկը կասի՝ «բավական է»: Հասարակությունը միայն օրենքներով չի փոխվում, այլ նաեւ՝ մարդկանց վարքով: Եթե մենք շարունակ կերակրենք այդ մթնոլորտը, այն ավելի կուժեղանա: Բայց եթե սկսենք արժեւորել կրթված խոսքը, հարգանքը, փաստարկված բանավեճը, իրավիճակն էլ կփոխվի: Դա երկար ճանապարհ է, բայց ուրիշ ճանապարհ պարզապես չկա:

- Շատերը կասեն. «Սա ընդամենը ժամանց է՝ մարդիկ վիճում են ուղիղ եթերում, ինչո՞ւ եք համազգային խնդիր սարքում»:

- Եթե այդ ամենը տեսնեին միայն մեծահասակները, գուցե կարելի լիներ այդպես մտածել: Բայց այդ «ժամանցի» դիտողները հաճախ դեռահասներն են: Նրանք սովորում են ոչ միայն դասագրքից, այլեւ այն ամենից, ինչ տեսնում են հեռախոսի էկրանին: Երեխան տեսնում է, որ հայհոյանքով կարելի է հայտնի դառնալ, ակամա սկսում է դա ընկալել որպես ընդունելի վարք: Ահա՝ այստեղ է վտանգը: Ես ազատ խոսքի կողմնակից եմ: Բայց ազատությունը պատասխանատվությունից անջատել չի կարելի: Ոչ մի ժողովրդավարական հասարակությունում խոսքի ազատությունը չի նշանակում ուրիշին նվաստացնելու կամ ատելություն տարածելու իրավունք: Իրավունքը միշտ էլ իր հետ բերում է պարտականություն:

- Ասում են՝ «Լեզուն ոսկոր չունի, բայց ոսկոր է կոտրում»: Իսկ ինչ կարելի է անել: Միայն պատժամիջոցնե՞րն են լուծումը:

- Ոչ: Պատիժը վերջին միջոցն է: Առաջին հերթին կրթություն է պետք: Պետք է ավելի շատ խոսել մեդիագրագիտության, թվային էթիկայի, խոսքի մշակույթի մասին: Ծնողը, ուսուցիչը, լրագրողը, արվեստագետը, պետական կառույցները՝ բոլորն այստեղ իրենց բաժին պատասխանատվությունն ունեն: Եթե ուզում ենք առողջ հասարակություն ունենալ, պետք է առողջացնենք նաեւ մեր հանրային խոսքը: Երբեմն մեկ նախադասությունը կարող է մարդու կյանք փոխել՝ դեպի լավը կամ դեպի վատը: Այդ պատճառով ասում եմ՝ խոսքը նույնպես պատասխանատվություն է: Թվային աշխարհը վիրտուալ է, բայց այնտեղ հնչող բառերի հետեւանքները՝ իրական:

- Հանրային խոսքի որակը միայն մշակութային խնդիր չէ, այլեւ ազգային անվտանգության բաղադրիչ: Հատկապես մեծ է TikTok-ի ազդեցությունը:

- Հանրային խոսքի որակն անմիջականորեն կապված է հասարակության ներքին առողջության հետ: Եթե թվային հարթակներում գերակշռում են հայհոյանքը, ատելության խոսքն ու բռնության քարոզը, դա վաղ թե ուշ ազդում է հասարակական համերաշխության վրա: Այդ պատճառով բազմաթիվ երկրներ սոցիալական հարթակներին վերաբերվում են ոչ միայն որպես ժամանցի, այլեւ որպես հանրային անվտանգության կարեւոր բաղադրիչի: Օրինակ՝ Իրանում TikTok-ի հասանելիությունը սահմանափակվել է՝ ազգային անվտանգության եւ տեղեկատվական միջավայրի վերահսկողության նկատառումներով: Անկախ այդ երկրի քաղաքական համակարգի վերաբերյալ տարբեր գնահատականներից՝ այս օրինակը ցույց է տալիս, որ սոցիարթակների ազդեցությունն այսօր շատ պետություններ դիտարկում են նաեւ անվտանգության տեսանկյունից: Բայց միայն դժգոհելով ոչինչ չի փոխվի, եթե խնդիրը կարեւոր ես համարում, պետք է նաեւ գործես: Այդ պատճառով բաց նամակներով դիմել եմ 3 պետական կառույցի՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տնօրենին, մարդու իրավունքների պաշտպանին եւ ներքին գործերի նախարարին: Ուզում եմ, որ այս հարցը դառնա պետական ու մասնագիտական քննարկման թեմա: Որովհետեւ խոսքը միայն սոցցանցերի մասին չէ: Խոսքը վաղվա Հայաստանի մասին է: Համոզված եմ՝ թվային աշխարհը կարող է լինել գիտելիքի, մշակույթի եւ ստեղծարար մտքի տարածք, բայց դրա համար բոլորս՝ պետությունը, հասարակությունը, ընտանիքը եւ յուրաքանչյուր օգտատեր, պետք է հասկանանք մի ճշմարտություն. ազատ խոսքը ժողովրդավարության հենասյուներից է, բայց այն չի կարող վերածվել անպատասխանատվության ապաստանի:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՎԱՆԱԿԱՆԸ

«Խորհրդավոր վանականը» խորհրդային պատմաարկածային կինոնկարն արտահայտում է իր ժամանակի ոգին ու սովետական գաղափարախոսությունը: Ռեժիսորն Արկադի Կոլցատն է: Կինոնկարը նկարահանվել է 1967-ին, էկրան բարձրացել՝ 1968-ին: Դիտել է 37,6 միլիոն մարդ: Այն համարվում է 1968-ի ամենադիտված սովետական կինոնկարներից մեկը եւ կարելի է համարել արկածային մարտաֆիլմ, որը պատմում է խորհրդային հետախույզների՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ հակահեղափոխականների դեմ պայքարի մասին: Պարունակում է նաեւ քաղաքական դետեկտիվի տարրեր, նույնիսկ կարող է համարվել հոգեբանական թրիլլեր:

Իր ժամանակի, միջավայրի ու «մեսիջների» մասին վավերագրական արժեք ձեռք բերած կինոնկարը կարող է հետաքրքրել բոլոր նրանց, որոնց սովետական կինոժառանգությունն օտար չէ: 1960-ականների երկրորդ կեսն այն շրջանն է, երբ ակտիվորեն զարգանում է պատմաարկածային կինոն: «Հալոցքի» շրջանի հարաբերական ազատականացումից հետո խորհրդային կինոն հանդիսատեսի համար նոր ձեւեր ու բովանդակություն էր ստեղծում:

Առհասարակ, սովետական մշակույթում քաղաքացիական պատերազմն ամենաարծարծված թեմաներից է: Սակայն տասնամյակից տասնամյակ՝ պատմական այդ փուլի կինոմեկնաբանությունը փոփոխություններ էր կրում: Եթե 30-50-ականներին գերազանցում էին մարտական գործողությունների տեսարանները, ապա 60-ականների վերջին՝ արդեն հետախուզական գործողությունները, ընդհատակի աշխատանքն ու հատուկ ծառայությունների գործողությունները:

«Խորհրդավոր վանականը» ֆիլմում խորհրդային հետախույզների իրականացրած գաղտնի օպերացիան է, որն իրականացվում է վանքի քողարկմամբ, որտեղ թաքնվում էին հակահեղափոխականները: Գործողությունները ծավալվում են Ուկրաինայում՝ 1920-ին: Սպիտակ բանակի պարտությունից հետո հակահեղափոխականները պատրաստում են ապստամբություն՝ սովետական իշխանությունների դեմ: Նրանք թաքնվում են վանքում: Այնտեղ են ուղարկում փորձառու հետախույզ Վորոնցովին, որը ներդրվում է հակառակորդի ճամբարում: Գործողությունը, պարզվում է, շատ ավելի բարդ էր, քան կարելի էր ենթադրել: Վանքում նաեւ Վրանգելի բանակի գործակալ կար, հայտնվում են կրկնակի գործակալներ: Գալիս է մի պահ, որ ուր որ է՝ բացահայտվելու է Վորոնցովը, եւ նրան սպանելու են, սակայն նա պետք է ավարտին հասցներ իր առաջադրանքը: Սա 60-ականների սովետական կինոյում նոր բան էր ու մեծ հետաքրքրություն էր առաջացնում հանդիսատեսի մոտ:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՔՊ-ի ՎԵՐՋԻՆ ՇԱՆՍԸ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Հայ բնապահպանները շատ բան ունեն սովորելու իրենց ադրբեջանցի գործընկերներից: Դուք տեսաք, չէ՞, թե ինչպես նրանք խառնվեցին քաղաքականությանն ու փակեցին Լաչինի միջանցքը: Իսկ մերո՞նք… Մերոնք էշի ականջում քնած են: Լափը տաս՝ տնքալով մի երկու խոսք կասեն, չտաս՝ բնության ու բնապահպանության հերն էլ անիծած, բա իրենց պե՞տք ա, որ մի հատ էլ պատահաբար խառնվեն քաղաքականությանն ու ընկնեն Նիկոլի քացու տակ: Առյուծ է՝ սատկել է, իրենց ի՞նչ: Դա էլ հո Նիկոլի Չալոն չի՞, որ աղմուկ բարձրացնեն, թե ընդդիմության նավսից է սատկել…

Շարունակելով թեման՝ գանք Երեւանի բուսաբանական այգի, որտեղ Երեւանի քաղաքապետարանը բազմամիլիոնանոց շինաշխատանքներ է կատարում, ավելի ստույգ՝ «կյանքի պուրակ» է կառուցում: Այդ ծրագրով պիտի ճանապարհներ ու ճեմուղիներ կառուցվեն, լճակներ, ոռոգման համակարգ, լուսավորություն, ֆլան-ֆստան: Ասում են՝ Նիկոլ Փաշինյանն օրերս այցելել է բուսաբանական այգի եւ խիստ դժգոհ է մնացել շինաշխատանքների որակից ու ընթացքից: Անձամբ ես Փաշինյանին ուղեկցող խմբում չեմ եղել, բայց ականատեսներից մեկն ինձ պատմել է, որ ամենակուրիոզ պահը վրա է հասել այն ժամանակ, երբ բլրի գագաթին Փաշինյանի, շատ ներողություն, «չիշիկը» բռնել է: Բա ի՞նչ անենք, բա ո՞նց անենք, բա որտե՞ղ անենք… Պարզվել է՝ այգում զուգարան չկա: Ավելի ճիշտ՝ զուգարանի համար նախատեսված շինություն կա, բայց այն դեռ չի գործում եւ գտնվում է այգու հեռավոր հատվածում, ուր այդ վիճակում հասնելու համար մեծարգո վարչապետին ամենաքիչը ՍՍ-35 ինքնաթիռ էր պետք: Այլապես… Մի խոսքով, Փաշինյանը թքել հեռացել է՝ «հիշելով» Ավինյանին ու նրան քաղաքապետ կարգողին:

Սրա հետեւանքը մենք տեսանք կառավարության վերջին նիստին, որի ժամանակ մեծարգոն անդրադարձավ բուսաբանական այգու անմխիթար վիճակին ու աշխատանքների հետագա վերահսկողությունը հանձնարարեց փոխվարչապետին: Սա նշանակում է, որ առաջիկայում Ավինյանը հրաժեշտ կտա պաշտոնին, քանզի թե՛ ժամկետներից է ուշացել, թե՛ մինչ օրս գոնե մեկ հատիկ ծառ չի տնկել՝ կտրված հազվագյուտ ծառերի փոխարեն: Ի դեպ, ասում են՝ 16 հազար «իմպորտնի» ծառ պետք է տնկվի, ահագին փող է տրամադրվել դրա համար, բայց ծառերը դեռ չկան, իսկ փողը՝ Աստված գիտի, թե ուր է: Մի քանի հատ փոս են փորել մուտքի մոտ, այն էլ՝ երեւի Նիկոլին ցույց տալու համար:

Ավինյանը միակ «դժբախտը» չէ ՔՊ-ից, որը, կարծում եմ՝ հրաժեշտ կտա պաշտոնին: Փաշինյանը հենց այդ մասին էր խոսում, երբ ասում էր, որ 21-րդ դարում Հայաստանում չկա մեկը, որի մասին ինքն ամեն ինչ չիմանա: ՔՊ-ականներն էլ բացառություն չեն կազմում: Փաշինյանը ՔՊ-ից որի վրա մատը դնի, իսկույն կթռնի պաշտոնից, կհայտնվի հետապնդումների անվերջանալի շղթայում: Ալեն Սիմոնյանի տրամադրությունը, ճիշտ է, շատ բարձր է, ցույց է տալիս, թե ուրախ է հանգստանալու հնարավորության համար, բայց դա այնքան էլ այդպես չէ: Ալեն Սիմոնյանը շատ լավ է ճանաչում Փաշինյանին եւ գիտի, թե նա ինչի է ընդունակ պատասխանատվության բեռը ուրիշների վրա բարդելու գործում: Ում ասես՝ մեղավոր կհանի իր գործած անդառնալի սխալների համար, «կկզըցնի», կսատկացնի, դավաճանի պիտակ կկպցնի, տնով-տեղով կոչնչացնի… Բա հո միայնակ պատասխան չի՞ տալու:

Ինչքան բանջարաբոստանային կուլտուրա կա՝ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ, ս. է անելու վարչապետի աշխատակազմից: Չե՞ք հավատում… Բա այ Արայիկ Հարությունյան, բա այ Նիկոլի շտաբի պետ, ուրեմն մեծարգո վարչապետը քեզ այդպիսի գործ վստահի, եւ դու գետնին գցե՞ս նրա վստահությունը… Որքան գցումբռնում եմ՝ այս պարոնի վիճակն ավելի բարդ է, քան Ալեն Սիմոնյանի վիճակը: Դիցուք, Երեւանում Փաշինյանի գրանցած ավելի քան համեստ «հաղթանակը» Արայիկ Հարությունյանի եւ Տիգրան Ավինյանի համատեղ աշխատանքի արդյունքն է: Ասում են՝ հենց Երեւանի մի քանի տեղամասի տվյալներին ծանոթանալուց հետո է Նիկոլը, լեղաճաք եղած, վազել ՔՊ-ի գրասենյակ եւ հայտարարել իր «հաղթանակի» մասին: Ախր, սա համարյա դավադրություն էր Նիկոլի դեմ, ինչը նա երբեք մոռացության չի տա:

Եվ այսպես, կալպակի տակ են բոլոր ՔՊ-ականները, անգամ՝ Միրզոյան Արարատն ու Պապիկյան Սուրենը, որոնք ավելի շուտ քարոզարշավի դեկորացիաներ էին, քան քարոզարշավորդներ: Նրանք իրենց հակառեյտինգից բացի ի՞նչ են տվել Նիկոլին, որ մի հատ էլ հույս փայփայեն, թե կմնան իրենց պաշտոններին:

Ինչու եմ գրում այս ամենի մասին: Միանգամից ասեմ, որ ՔՊ-ն հիանալի հնարավորություն ունի՝ առաջիկայում ազատվելու Նիկոլ Փաշինյանից: ՔՊ-ն է խորհրդարանում վարչապետի թեկնածու առաջադրելու: Դա է պահանջում օրենքը: Եվ, ուրեմն, այս օրերին ՔՊ-ն լիքը մտածելու բան ունի՝ առաջադրել Նիկոլ Փաշինյանի՞ն, թե՞ իրենց միջից մեկ ուրիշի՝ ավելի հավասարակշռված մի մարդու (ենթադրաբար՝ կան այդպիսիք): Այո, վերցնեն ու Նիկոլին չառաջադրեն… Չորով… Ընդդիմությունից էլ ոչ մեկին թող չառաջադրեն, որովհետեւ դա էլ ելք չէ: Հենց իրենց միջից ընտրեն եւ այդ մարդու՝ նոր վարչապետի ջանքերով փորձեն փրկվել «ներթիմային» անխուսափելի վենդետայից:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԲ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԱՐ ԼՍԵԼ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Մի ցավոտ հարցի մասին եմ ուզում խոսել. ինչո՞ւ է հասարակության մեջ պետական որոշումների նկատմամբ վստահությունը գնալով նվազում, ինչո՞ւ է գրեթե յուրաքանչյուր աղմկահարույց դեպք վերածվում քաղաքական բախման, եւ ինչո՞ւ այնտեղ, որտեղ պետք է գերակշռեն փաստն ու օրենքը, հայտնվում են անվստահությունն ու կասկածը:

Գագիկ Ծառուկյանի նկատմամբ իրականացվող իրավական գործընթացը, Եկեղեցու շուրջ շարունակվող լարվածությունը, հիբրիդային պատերազմի մասին քննարկումները տարբեր թեմաներ են, բայց ունեն մեկ ընդհանուր հենք՝ հասարակության եւ պետական կառույցների միջեւ վստահության ճեղքը: Երբ քաղաքացին հավատում է, որ օրենքը գործում է բոլորի համար հավասար, նա կարող է նույնիսկ չհամաձայնել որեւէ որոշման հետ, բայց ընդունում է դրա իրավաչափությունը: Իսկ երբ այդ վստահությունը չկա, յուրաքանչյուր գործողություն դիտվում է որպես ինչ-որ մեկի շահի արտահայտություն: Մենք սկսել ենք ոչ միայն տարբեր կարծիքներ ունենալ, այլեւ տարբեր իրականություններում ապրել: Ծառուկյանի շուրջ զարգացումներն այդ հակասության հերթական արտահայտությունն են:

Իրավական տեսանկյունից՝ ցանկացած մարդ, անկախ պաշտոնից, հարստությունից կամ հասարակական դիրքից, պետք է պատասխան տա, եթե կան իրավական հիմքեր: Բայց կարեւոր է, թե ինչպես է հասարակությունն ընկալում այդ գործընթացը: Երբ քրեական գործերը քաղաքական երանգ են ստանում, իրավական համակարգի նկատմամբ վստահությունը զրոյանում է: Եթե այսօր գործ է հարուցվում ազդեցիկ մարդու դեմ, արդյո՞ք դա նշանակում է, որ օրենքը սկսել է հավասար գործել: Թե՞ նշանակում է, որ իշխանությունն իր հակառակորդներից մեկին հերթական թիրախ է ընտրել:

Եկեղեցի-իշխանություն հակասությունը, որը մի քանի ամիս է՝ «քնած» է, կարող է ամեն պահի գլուխ բարձրացնել: Հայ առաքելական եկեղեցին հայ ժողովրդի պատմության մեջ միայն կրոնական կառույց չի եղել, այլ ունեցել է ազգային ինքնության, մշակույթի եւ ինքնապահպանության դեր, հետեւաբար, նրա շուրջ ցանկացած հակամարտություն արագորեն դուրս է գալիս կրոնական կամ վարչական շրջանակներից եւ դառնում հասարակական լայն քննարկման առարկա: ԵԱՀԿ բարձրաստիճան պաշտոնյայի հետ կապված ձայնագրությունը, որտեղ քննարկվում է կաթողիկոսի հարցը, լուրջ հարցեր է առաջացնում՝ որքանո՞վ են արտաքին դերակատարները ներգրավված Հայաստանի համար զգայուն այս գործընթացում: Արդյո՞ք մեր ներքին հարցերն արդեն դարձել են եվրոպական ազդեցության թիրախ:

Հայաստանն այսօր գտնվում է բարդ աշխարհաքաղաքական միջավայրում: Մի կողմից՝ երկար տարիների հարաբերություններ Ռուսաստանի հետ, մյուս կողմից՝ հարաբերություններ Եվրամիության եւ արեւմտյան կառույցների հետ: ՀՀ իշխանության հիմնական խնդիրն այն չէ միայն, թե ինչ ուղղություն է ընտրում, կարեւոր է՝ ինչպես է այդ ընտրությունը բացատրում սեփական հասարակությանը: Ո՞րն է Հայաստանի երկարաժամկետ ռազմավարությունը, ի՞նչ շահեր են պաշտպանվում, ի՞նչ գին կարող է ունենալ յուրաքանչյուր արտաքին քաղաքական քայլ: Արտաքին քաղաքականությունը պետք է հիմնված լինի հաշվարկի, ազգային շահի եւ հասարակության հետ ազնիվ խոսակցության վրա, ինչը չկա:

Ամենամեծ վտանգը իրար չլսող հասարակությունն է. այս բոլոր իրադարձությունները՝ իրավական գործընթացները, Եկեղեցու շուրջ զարգացումները, արտաքին քաղաքական քննարկումները, վերջի-վերջո, բերում են նույն խնդրին՝ պետությունն ու հասարակությունը դադարել են իրար լսել: Իսկ սա հղի է քաղաքական հակասությունների, ներհանրային պատերազմի վտանգով: Պետությունը չի ուժեղանում միայն իշխանության ուժով, այլ երբ քաղաքացին վստահում է իր պետական կառույցներին, իսկ իշխանությունը լսում է ոչ միայն իրեն աջակցողներին, այլեւ՝ քննադատողներին: Այսօր Հայաստանի ամենամեծ խնդիրը՝ վերականգնել միմյանց լսելու կարողությունը: Որովհետեւ պետությունը եւ հասարակությունը հակամարտող կողմեր չեն: Եթե նրանք վերջնականապես դադարեն խոսել իրար հետ, կորուստը լինելու է ոչ թե մեկ քաղաքական ուժինը, այլ՝ ամբողջ երկրինը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am